

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԿՈՄԻՏԵ

ՀՀ ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՌՈՏԱԳԻՐ
2025 ԹՎԱԿԱՆԻ ԵՐԿՐՈՐԴ ԵՌԱՄՍՅԱԿ



1. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք
Ամսաթիվը և համարը	22.04.2025թ. ՀՕ-76-Ն
Հրապարակումը	28.04.2025թ.
Ուժի մեջ է	29.04.2025թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206337

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում.

1. 2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար եկամտային հարկի հաշվարկի (հայտարարագրի) ներկայացման համար ժամկետ է սահմանվել՝ համապատասխանաբար՝ 2025 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի մարտի 2-ից մինչև 2026 թվականի նոյեմբերի 1-ը, իսկ հետագա հաշվետու տարիների համար՝ յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա մարտի 2-ից մինչև հուլիսի 1-ը: Միաժամանակ, եկամտային հարկի վճարման համար վերջնաժամկետ է սահմանվել՝ 2024 և 2025 թվականների հաշվետու տարիների համար՝ համապատասխանաբար՝ մինչև 2025 թվականի նոյեմբերի 1-ը և 2026 թվականի նոյեմբերի 1-ը, իսկ հետագա հաշվետու տարիների համար՝ մինչև յուրաքանչյուր հաշվետու տարվան հաջորդող հարկային տարվա հուլիսի 1-ը:

2. Եթե հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը մինչև համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրը տեղադրված չէ հարկային մարմնի կայքում, ապա հարկային հաշվարկն ուշ ներկայացնելու կամ հարկը (վճարը) ուշ վճարելու համար օրենսգրքով սահմանված պատասխանատվության միջոցների կիրառության առումով, համապատասխան հարկային հաշվարկի ներկայացման կամ հարկի (վճարի) վճարման համար օրենսգրքով կամ վճարների վերաբերյալ ՀՀ օրենքներով սահմանված վերջնաժամկետը հետաձգվում է համապատասխան հաշվետու ժամանակաշրջանի վերջին օրվանից մինչև հարկային հաշվարկի էլեկտրոնային տարբերակը հարկային մարմնի կայքում տեղադրվելու օրը ներառված օրերի չափով:

3. այն ֆիզիկական անձը, որը մինչև եկամտային հարկի տարեկան հաշվարկների (հայտարարագրերի) ներկայացման՝ օրենսգրքով սահմանված վերջնաժամկետը դիմել է Հայաստանի Հանրապետության նույնականացման քարտ ստանալու համար, սակայն մինչև նշյալ վերջնաժամկետը չի ստացել նույնականացման քարտը, եկամտային հարկի տարեկան հաշվարկը (հայտարարագիրը) ներկայացնում է կամ եկամտային հարկը վճարում է մինչև նույնականացման քարտի տպագրման օրվան հաջորդող ամսվա 25-ը ներառյալ:

2. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

18.04.2025թ. ՀՕ-82-Ն

07.05.2025թ.

01.01.2026թ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206615>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում սահմանվել է, որ կենսապաշարների օգտագործման համար բնօգտագործման վճարի բազա համարվում են՝

ա. բուսական (բացառությամբ բնափայտի կամ երկրորդական անտառանյութի) և կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների համար՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն՝ լիազոր մարմնի կնքած կենսապաշարների օգտագործման պայմանագրով կամ տրամադրած լիցենզիայով սահմանված կենսապաշարի ծավալը, քաշը կամ միավորը (հատը) կամ չափման այլ ֆիզիկական բնութագրիչը, իսկ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակը գերազանցելու կամ զրոյական չափաքանակի դեպքում՝ փաստացի օգտագործված ծավալը, քաշը կամ միավորը (հատը) կամ չափման այլ ֆիզիկական բնութագրիչը,

բ. բնափայտի կամ երկրորդական անտառանյութի փաստացի օգտագործված ծավալը:

Վերանայվել են նաև կենդանական աշխարհի օբյեկտ հանդիսացող կենսապաշարների համար բնօգտագործման վճարի դրույքաչափերը:

Միաժամանակ, սահմանվել է, որ բնափայտի կամ երկրորդական անտառանյութի օգտագործման համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում օգտագործված պաշարների ծավալների հիման վրա: Կենսապաշարների մնացած տեսակների համար պետական բյուջե վճարման ենթակա բնօգտագործման վճարը հաշվարկվում է հաշվետու ժամանակաշրջանում կենսապաշարների օգտագործման պայմանագրով կամ լիցենզիայով սահմանված ծավալների հիման վրա, իսկ բնօգտագործման վճարի բազայի չափաքանակը գերազանցելու կամ զրոյական չափաքանակի դեպքում՝ հաշվետու ժամանակաշրջանում փաստացի օգտագործված պաշարների ծավալների հիման վրա: Կենսապաշարների՝ պայմանագրով կամ լիցենզիայով սահմանված և փաստացի օգտագործված ծավալների դրական տարբերության դեպքում պետական բյուջե վճարված բնօգտագործման վճարի գումարը վճարողին վերադարձման ենթակա չէ:

3. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

«Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

18.04.2025թ. ՀՕ-96-Ն

Հրապարակումը

14.05.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206795>

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված փոփոխությունների արդյունքում մասնավոր պահնորդական գործունեություն իրականացնելու համար պետական տուրքի դրույքաչափը սահմանվել է բազային տուրքի 3000-ապատիկի չափով (գործող 500-ապատիկի փոխարեն):

4. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

12.05.2025թ. ՀՕ-117-Ն

Հրապարակումը

02.06.2025թ.

Ուժի մեջ է

12.06.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=207700>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների արդյունքում հստակեցվել են փոխարկելի փոխառության պայմանագրի կնքման և դրանով ստանձնված պարտավորությունների կատարման հետ կապված հարկային հետևանքները, մասնավորապես, սահմանվել է, որ փոխարկելի փոխառության պայմանագրի հիման վրա վճարման ենթակա տոկոսները բաժնետոմսի կամ բաժնեմասի փոխարկման դեպքում համարվում են վճարված փոխարկման պահին:

5. Փաստաթուղթ

««Պետական տուրքի մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

29.05.2025թ. ՀՕ-122-Ն

Հրապարակումը

13.05.2025թ.

Ուժի մեջ է

14.06.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/208167/latest>

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված փոփոխության արդյունքում արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2523 ծածկագրին դասվող ցեմենտի (բացառությամբ 2523210000, 2523100000 ապրանքային դիրքերին դասվող ծածկագրերի)՝ «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի ներմուծման լիցենզիա տրամադրելու համար պետական տուրքի չափը սահմանվել է բազային տուրքի 800-ապատիկի չափով (գործող՝ 200-ապատիկի փոխարեն):

6. Փաստաթուղթ

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

29.05.2025թ. ՀՕ-128-Ն

Հրապարակումը

13.06.2025թ.

Ուժի մեջ է

14.06.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=208173>

Համառոտ նկարագիր

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-181-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը 2025թ. հուլիսի 1-ից փոփոխվել է 2026 թվականի հունվարի 1-ով:

7. Փաստաթուղթ

««Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

29.05.2025թ. ՀՕ-155-Ն

Հրապարակումը

13.06.2025թ.

Ուժի մեջ է

14.06.2025թ.

Հղում

<https://arlis.am/hy/acts/208150>

Համառոտ նկարագիր

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին» 2024 թվականի ապրիլի 11-ի ՀՕ-209-Ն օրենքի ուժի մեջ մտնելու ժամկետը 2025թ. հուլիսի 1-ից փոփոխվել է 2026 թվականի հունվարի 1-ով:

8. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ և լրացում կատարելու մասին և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» օրենքում փոփոխություն կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

29.05.2025թ. ՀՕ-156-Ն

Հրապարակումը

24.06.2025թ.

Ուժի մեջ է

25.06.2025թ.

Հղում

<https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=208557>

Համառոտ նկարագիր

Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում կատարված փոփոխության արդյունքում նախատեսվել է ՀՀ-ում գործող ֆոնդային բորսայում (կարգավորվող շուկայում) ցուցակված (առևտրին թույլատրված) բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտների հարկման նպատակով ՀՀ հարկային օրենսգրքի 126-րդ և 149-րդ հոդվածներով սահմանված արտոնությունների գործողության ժամկետները երկարաձգել երկու տարով՝ արտոնությունները տարածելով նաև մինչև 2027 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ ցուցակված բաժնետոմսերից, պարտատոմսերից կամ ներդրումը վկայող այլ արժեթղթերից ստացվող եկամուտների նկատմամբ:

9. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենք

Ամսաթիվը և համարը

29.05.2025թ. ՀՕ-175-Ն

Հրապարակումը

24.06.2025թ.

Ուժի մեջ է

04.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=208560>

Համառոտ նկարագիր

ՀՀ հարկային օրենսգրքում կատարված լրացումների և փոփոխությունների արդյունքում.

1. օրենսգրքի կիրառության նպատակով «Կրիպտոակտիվների մասին» ՀՀ օրենքով սահմանված կրիպտոակտիվը, այդ թվում՝ էությամբ եզակի համարվող (յուրաքանչյուրն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող) և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվը, ինչպես նաև ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման համար իրականացվող գործունեության արդյունքում ստեղծված կրիպտոակտիվը, հանդիսանում է ակտիվ, բացառությամբ «Արժեթղթերի շուկայի մասին» օրենքի իմաստով արժեթղթի կամ ածանցյալ

Ֆինանսական գործիքի սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների, «Ներդրումային ֆոնդերի մասին» օրենքի իմաստով ֆոնդի փայի (բաժնետոմսի) սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների և «Բանկերի և բանկային գործունեության մասին» օրենքի իմաստով բանկային ավանդի (բանկային ավանդի պայմանագրի) սահմանմանը համապատասխանող կրիպտոակտիվների,

2. կրիպտոակտիվը այլ կրիպտոակտիվով փոխանակության գործարքի արդյունքում ձեռք բերված կրիպտոակտիվի սկզբնական արժեքը որոշվում է փոխանակված կրիպտոակտիվի սկզբնական արժեքի չափով,

3. կրիպտոակտիվի սկզբնական արժեքը որոշվում է կրիպտոակտիվի ձեռքբերման, ստացման (այդ թվում՝ անհատույց) օրվա դրությամբ՝ ելնելով այդ օրը կառավարության սահմանած կարգով որոշված բորսայի կողմից ԱՄՆ դոլարով կամ եվրոյով հրապարակված կրիպտոակտիվի գնի նկատմամբ այդ օրը Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի հրապարակած՝ արժույթային շուկաներում ձևավորված միջին փոխարժեքից,

4. կրիպտոակտիվների օտարման գործարքների մասով եկամտի ստացման իրավունքի ձեռքբերումը, ինչպես նաև կրիպտոակտիվների ձեռքբերման ծախսերը կարող են փաստաթղթավորվել նշված գործարքները հիմնավորող հաշվարկային փաստաթուղթ չհամարվող այլ փաստաթղթերով,

5. կրիպտոակտիվի օտարումը հանդիսանում է ԱԱՀ-ով հարկման օբյեկտ և միաժամանակ հանդիսանում է ԱԱՀ-ից ազատված գործարք, իսկ կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձանց կողմից մատուցվող ծառայություններն ազատված չեն ԱԱՀ-ից,

6. շահութահարկով հարկման բազայի որոշման նպատակով համախառն եկամտից ենթակա չէ նվազեցման՝ կրիպտոակտիվի օտարման գործարքի դեպքում կրիպտոակտիվի սկզբնական արժեքի այն մասը, որը գերազանցում է կրիպտոակտիվի օտարման գործարքի դիմաց հաշվեգրված եկամտի գումարը,

7. ֆիզիկական անձանց կողմից կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները համարվում են նվազեցվող եկամուտներ, բացառությամբ էությամբ եզակի համարվող (յուրաքանչյուրն առանձնահատուկ հատկանիշներ ունեցող) և փոխարինելի չհամարվող կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները, ապակենտրոնացված գրանցամատյանի պահպանման կամ գործարքների վավերացման համար իրականացվող գործունեության արդյունքում ավտոմատ կերպով որպես պարգևատրում ստեղծված կրիպտոակտիվների օտարումից ստացվող եկամուտները, որոնց մասով եկամտային հարկը հաշվարկվում է 1% դրույքաչափով,

8. կրիպտոակտիվներով ծառայություն մատուցող անձինք չեն կարող հանդիսանալ շրջանառության հարկ վճարող, միկրոձեռնարկատիրության սուբյեկտ,

9. կրիպտոակտիվի օտարումից ստացվող եկամուտները հանդիսանում են շրջանառության հարկով հարկման օբյեկտ:

**10. Փաստաթուղթ
Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է**

««Պետական տուրքի մասին» օրենքում լրացումներ կատարելու մասին» ՀՀ օրենք
29.05.2025թ. ՀՕ-177-Ն
24.06.2025թ.
04.07.2025թ.

Համառոտ նկարագիր

«Պետական տուրքի մասին» 1997 թվականի դեկտեմբերի 27-ի ՀՕ-186 օրենքում կատարված լրացումների արդյունքում բանկային և ֆինանսավարկային կազմակերպությունների բնագավառում սահմանվել է պետական տուրքի հետևյալ դրույքաչափերը՝

1. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի (օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի մասնաճյուղի) գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 500-ապատիկի չափով,

2. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի յուրաքանչյուր մասնաճյուղի գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով,

3. կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի (օտարերկրյա կրիպտոակտիվներով ծառայություններ մատուցող անձի) յուրաքանչյուր ներկայացուցչության գործունեության համար՝ տարեկան բազային տուրքի 200-ապատիկի չափով:

11. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի մարտի 31-ի N 335-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

03.04.2025թ. N 360-Ն

Հրապարակումը

03.04.2025թ.

Ուժի մեջ է

04.04.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=205137>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2016 թվականի մարտի 31-ի «Փոխապատվաստման նպատակով մարդու դոնորական օրգանների և (կամ) հյուսվածքների ներմուծման, արյան և դրա բաղադրամասերի, թմրամիջոցների, հոգեմետ (հոգեներգործուն) նյութերի կամ դրանց պրեկուրսորների ներմուծման և արտահանման կարգը ու դրանց ցանկերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի ապրիլի 26-ի N 551-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 335-Ն որոշման մեջ, որի արդյունքում համապատասխանեցվել է որոշման լիազորող նորմը գործող օրենքի հոդվածին, կանոնակարգվել է սեռաբջիջների և սաղմի ներմուծման և արտահանման հետ կապված իրավահարաբերությունները, ինչպես նաև սահմանվել է եզրակացության (թույլատրման փաստաթուղթ) համար դիմելու պարտադիր պայման հանդիսացող փաստաթղթերի՝ Կենսաբանական ծնողի (ծնողների) գրավոր համաձայնության և բժշկական օգնության և սպասարկման համապատասխան տեսակի լիցենզիա ունեցող բժշկական կազմակերպության տրամադրած տեղեկանքի ձևերը:

12. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա պարենային արտադրանքի համար համապատասխանության գնահատման փաստաթղթերի ձևակերպման և ներկայացման, ինչպես նաև ազգային ռեեստրում ներառման պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

03.04.2025թ. N 374-Ն

Հրապարակումը

03.04.2025թ.

Ուժի մեջ է

04.04.2025թ.

Հղում<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205125>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններից Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող և Հայաստանի Հանրապետության տարածքում իրացվող համապատասխանության գնահատման ենթակա պարենային արտադրանքի համար համապատասխանության գնահատման փաստաթղթերի ձևակերպման և ներկայացման, ինչպես նաև ազգային ռեեստրում ներառման պահանջները:

13. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի N 727-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

03.04.2025թ. N 379-Ն

Հրապարակումը

03.04.2025թ.

Ուժի մեջ է

13.04.2025թ.

Հղում<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205129>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2019 թվականի հունիսի 6-ի «Ազատ տնտեսական գոտու կազմակերպչի ընտրության, հաշվետվություն ներկայացնելու, շահագործողի սկզբնական և հերթական հայտարարագրերի ներկայացման, ազատ տնտեսական գոտու շահագործողների ռեեստրում ներառվելու, վկայականի տրամադրման գործողության ժամկետի երկարաձգման և դադարեցման, հանձնաժողովի ձևավորման և գործունեության, ազատ տնտեսական գոտում պարզեցված (մեկ պատուհանի) սկզբունքով

պետության կողմից ծառայությունների մատուցման կարգերը հաստատելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2011 թվականի հոկտեմբերի 13-ի N 1521-Ն և 2012 թվականի մարտի 15-ի N 292-Ն որոշումները ուժը կորցրած ճանաչելու մասին» N 727-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում՝

1. լրացվել են «գործառնական ծախս» և «որակավորված, լրիվ դրույքով աշխատող» հասկացությունները,
2. լրամշակվել են սկզբական և հերթական հայտարարագրերի ձևերը՝ հաշվի առնելով, որ օրենքի 14-րդ հոդվածի 1-ին մասին 8-10-րդ կետերում նշված գործունեության տեսակներ իրականացնող շահագործողների համար սահմանվել են իրական ներկայության պայմաններ, ուստի վերջիններիս, ի թիվս գործող ցուցանիշների, պարտավորություն են ունենալու ներկայացնել այլ տվյալներ ևս,
3. ազատ տնտեսական գոտիների հարցերով միջգերատեսչական հանձնաժողովի անդամների առաջարկով՝ ամրագրվել է դրույթ, ըստ որի՝ հայտարարագրերը նախատեսվում է ներկայացնել նաև հանձնաժողովի անդամներին՝ ի գիտություն:

14. Փաստաթուղթ

«Աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգին ներկայացվող պահանջները, թվային համակարգի տվյալներին հասանելիություն տրամադրելու, թվային համակարգով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգը և թվային համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմինը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

10.04.2025թ. N 410-Ն

Հրապարակումը

10.04.2025թ.

Ուժի մեջ է

01.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=205500>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են աշխատանքային պայմանագրերի կնքման թվային համակարգին ներկայացվող պահանջները, թվային համակարգի տվյալներին հասանելիություն տրամադրելու և թվային համակարգով աշխատանքային պայմանագրերի կնքման կարգը:

Վերոնշյալ համակարգի կառավարումն իրականացնող լիազոր մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

15. Փաստաթուղթ

«Հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի նոյեմբերի 7-ի n 1923-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

17.04.2025թ. N 431-Ն

Հրապարակումը

18.04.2025թ.

Ուժի մեջ է

19.04.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2002 թվականի նոյեմբերի 7-ի «Ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) առանձին տեսակների տեղեկատվության բովանդակությունը և պարտադիր պահանջների մասին տեղեկատվությունն սպառողին հասցնելու կարգը սահմանելու մասին» N 1923-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում հնարավորություն է տրվել արտադրողին (ներմուծողին) Հայաստանի Հանրապետություն ներմուծվող հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների վերաբերյալ հայերեն տեղեկատվությունը (ապրանքի վերաբերյալ հայերեն թարգմանությունը) սպառողին ներկայացնելու նույնականացման (հսկիչ) նշանների միջոցով: Միաժամանակ, նշվածը չի տարածվում արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի 2402 10 000 0, 2402 20 100 0, 2402 20 900 0, 2402 90 000 0, 2403 11 000 0, 2403 19 100 0, 2403 19 900 0 ծածկագրերին համապատասխան ծխախոտային արտադրանք հանդիսացող ծխախոտային արտադրատեսակների վրա:

16. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի N 1034-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

17.04.2025թ. N 444-Ն

Հրապարակումը

21.04.2025թ.

Ուժի մեջ է

22.04.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205850>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2024 թվականի հուլիսի 4-ի «Դեղերի գրանցումների և վերագրանցումների փորձաքննությունների վճարների (տուրքերի) և ծախսերի փոխհատուցման ծրագիրը հաստատելու մասին» N 1034-Ն որոշման մեջ, որի արդյունքում հստակեցվել են որոշման մեջ առկա ձևակերպումներն ու հասկացությունները՝ դրանք համապատասխանեցնելով «Դեղերի մասին» և «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքներով սահմանված հասկացություններին, ինչպես նաև տրամադրվող աջակցության մեխանիզմը տարածվել է նաև գրանցման հավաստագրի ժամկետի երկարաձգման, հետգրանցումային փոփոխությունների, յուրաքանչյուր հաջորդ արտադրատարածք(ներ)ի կամ նոր ցուցման գրանցման, Հայաստանի Հանրապետությունում գրանցված դեղի դոսյեի՝ ԵԱՏՄ կանոններին համապատասխանեցման կամ փոխադարձ ճանաչման նպատակով իրականացվող և հետգրանցումային փոփոխությունների փորձաքննությունների, ինչպես նաև միայն Հայաստանի Հանրապետությունում ԵԱՏՄ կարգով գրանցված կամ դոսյեն համապատասխանեցված դեղի այլ երկրների փոխադարձ ճանաչման նպատակով փորձաքննությունների համար սահմանված վճարների (տուրքերի) վրա, ինչպես նաև

ընդհանուր ընթացակարգով գրանցված կամ ԵԱՏՄ կարգով միայն Հայաստանի Հանրապետությունում կիրառման նպատակով գրանցված դեղի փոփոխության, սպեցիֆիկացիայում ցուցանիշի փոփոխության դեպքում՝ լաբորատոր փորձաքննությունների համար սահմանված վճարների (տուրքերի) վրա:

17. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1288-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	17.04.2025թ. N 448-Ն
Հրապարակումը	18.04.2025թ.
Ուժի մեջ է	01.07.2025թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205798

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Տեղական ինքնակառավարման մարմինների կողմից հարկ վճարողների և անշարժ գույքի հարկի ու փոխադրամիջոցների գույքահարկի հաշվառման կարգը սահմանելու մասին» N 1288-Ն որոշման մեջ, որի արդյունքում հանվել է տեխնիկական զննության ենթակա փոխադրամիջոցների համար փոխադրամիջոցների գույքահարկի գծով հարկային պարտավորությունների վերաբերյալ տեղեկանքի անհրաժեշտությունը:

18. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի N 183-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	23.04.2025թ. N 462-Ն
Հրապարակումը	23.04.2025թ.
Ուժի մեջ է	24.04.2025թ.
Հղում	https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=205927

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 20-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող կարտոֆիլի սերմացուի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու, ներմուծման բաշխման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 183-Ն որոշման մեջ, որի արդյունքում փոփոխվել է ներմուծման թույլատրելի ծավալի չբաշխված

քանակությունից ներմուծման նոր թույլատրելի ծավալ ստանալու համար արտաքին տնտեսական գործունեության մասնակիցների կողմից հայտ ներկայացնելու ժամկետը, սահմանվելով՝ 2025 թվականի մայիսի 10-ից մինչև մայիսի 20-ը:

19. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1067-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի N 157-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում 30.04.2025թ. N 510-Ն

30.04.2025թ.

01.05.2025թ.

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=206424>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի «Սոցիալական ծախսերի տեսակների առանձին ուղղությունները, ընտանիքի անդամների շրջանակը և սոցիալական ծախսերի փոխհատուցման առավելագույն չափերը սահմանելու մասին» N 1067-Ն և ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 13-ի «Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 29-ի N 1067-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի N 956-Ն որոշման մեջ լրացում կատարելու մասին» N 157-Ն որոշումների մեջ, որոնց արդյունքում.

1. 2025 թվականի հունիսի 1-ից սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունքը ծագում է, եթե սոցիալական ծախսն անմիջականորեն կատարվել է հայտարարատու ֆիզիկական անձի կողմից, բացառությամբ որոշմամբ սահմանված դեպքերի (այն է՝ դասագրքերի վարձակալության նպատակով կատարված ծախսերի, որոնց մասով վճարում կատարված լինելու հանգամանքը հաշվի չի առնվում և աշխատողից հատուցում ստանալու պայմանով գործատուի կողմից ապահովագրական փաթեթների ձեռքբերման գծով կատարված ծախսերի):

Ընդ որում, սոցիալական ծախսը համարվում է հայտարարատու ֆիզիկական անձի կողմից անմիջականորեն կատարված, եթե վճարումը հիմնավորող փաստաթղթով որպես վճարող հանդիսանում է հայտարարատու ֆիզիկական անձը: Իսկ աշխատողից հատուցում ստանալու պայմանով գործատուի կողմից ապահովագրական փաթեթների ձեռքբերման դեպքում սոցիալական ծախսը հայտարարատու ֆիզիկական անձի կողմից անմիջականորեն կատարված լինելը հիմնավորվում է գործատուի կողմից ապահովագրական ընկերությանը տրվող տեղեկանքով:

Միաժամանակ, 2024 թվականի հունվարի 1-ից մինչև 2025 թվականի հունիսի 1-ն ընկած ժամանակահատվածում կատարված սոցիալական ծախսերի մասով սահմանվել է, որ նշված ժամանակահատվածում կատարված սոցիալական ծախսերը հայտարարատուին փոխհատուցվում են նաև այն դեպքերում, երբ սոցիալական ծախսերի դիմաց փաստացի վճարումը կատարվել է այլ անձի կողմից, սակայն հայտարարատուի միջոցներից: Հայտարարատուի միջոցներից սոցիալական ծախսերի կատարումը կարող է հիմնավորվել ծառայություններ մատուցող հարկ

վճարողին սոցիալական ծախսերի կատարումը հայտարարատուի միջոցներից կատարված լինելու վերաբերյալ համապատասխան փաստաթուղթ, այդ թվում՝ վճարող ֆիզիկական անձի անունով կատարված վճարումը հիմնավորող փաստաթուղթ կամ վճարման հանձնարարական (որտեղ նշված է վճարումը տվյալ ֆիզիկական անձի միջոցներից կատարված լինելու վերաբերյալ) կամ ֆիզիկական անձի (անձանց) համապատասխան հաստատում (հայտարարություն) ներկայացնելու միջոցով:

2. Համայնքների պատվերով համայնքային ոչ առևտրային կազմակերպությունների կողմից մատուցվող՝ որոշման հավելվածի 7-րդ կետի 1-ին և 2-րդ ենթակետերով սահմանված կրթական ծառայությունների մասով հաշվարկային փաստաթղթերը կարող են համայնքների անունից դուրս գրել համայնքային ոչ առևտրային կազմակերպությունները:

3. Եթե առողջության ապահովագրության փաթեթի ապահովագրական պայմանագրի համաձայն որպես ապահովագրի հանդես է եկել գործատուն՝ հայտարարատու հանդիսացող աշխատողի կամ վերջինիս ընտանիքի անդամների համար ապահովագրավճարի գծով կատարված ծախսերի դիմաց աշխատողից հատուցում ստանալու պայմանով, ապա սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունքը ծագում է հայտարարատու հանդիսացող աշխատողի մոտ՝ ապահովագրավճարի գծով կատարված ծախսերի դիմաց գործատուին տրամադրված հատուցման գումարի մասով: Ընդ որում, տվյալ դեպքում ապահովագրական փաթեթի մասով հաշվարկային փաստաթուղթը ապահովագրական ընկերության կողմից դուրս է գրվում ապահովագրի անձի անունով՝ որպես սոցիալական ծախս կատարող նշելով հայտարարատու հանդիսացող աշխատողի տվյալները:

4. Սոցիալական փաթեթի շահառուներից բացի, ՀՀ կառավարության 2014 թվականի մարտի 27-ի N 375-Ն որոշման 1-ին կետով հաստատված N 1 հավելվածի 2-րդ կետի 2-րդ ենթակետով սահմանված՝ պետության կողմից երաշխավորված անվճար և արտոնյալ պայմաններով բժշկական օգնության և սպասարկման ծառայություններ իրականացնող կազմակերպությունների աշխատողները ևս առողջության ապահովագրական փաթեթի գծով սոցիալական ծախսի փոխհատուցման իրավունքից կարող են օգտվել միայն սոցիալական փաթեթի շահառու և նշված կազմակերպությունների աշխատող չհամարվող ընտանիքի անդամների համար ապահովագրական փաթեթի ձեռքբերման ծախսերի մասով, իսկ ատամնաբուժական ծառայությունների գծով՝ նաև իրենց համար կատարված ծախսերի մասով:

20. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի N 1308-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

30.04.2025թ. N 530-Ն

30.04.2025թ.

10.05.2025թ.

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206451>

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2009 թվականի նոյեմբերի 12-ի «Ռազմական նշանակության արտադրանքի ցանկը, ռազմական նշանակության արտադրանքի ներմուծման, արտահանման, ռազմական նշանակության արտադրանքի տարանցիկ փոխադրման, այդ արտադրանքի առևտրի միջնորդական գործունեության լիցենզավորման կարգերը և անհրաժեշտ փաստաթղթերի ձևերը հաստատելու մասին» N 1308-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում համալրվել է ռազմական նշանակության արտադրանքի ցանկը:

21. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի մարտի 24-ի N 381-Ն, 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1112-Ն, 2014 թվականի հուլիսի 17-ի N 743-Ն, 2011 թվականի մայիսի 5-ի N 665-Ն, 2003 թվականի մարտի 27-ի N 347-Ն, 2004 թվականի օգոստոսի 5-ի N 1324-Ն, 2020 թվականի մարտի 12-ի N 284-Ն, 2023 թվականի հունիսի 22-ի N 1007-Ն և 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշումներում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

08.05.2025թ. N 560-Ն

Հրապարակումը

08.05.2025թ.

Ուժի մեջ է

09.05.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206692>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում լրացում է կատարվել որոշման N 2 հավելվածում, որով սահմանված է ՀՀ հարկային օրենսգրքի 64-րդ հոդվածի 2-րդ մասի 6-րդ կետով սահմանված ԱԱՀ-ից ազատման արտոնության կիրառության շրջանակները: Այդ լրացմամբ ԱԱՀ-ից ազատման արտոնությունը կիրառվում է նաև համայնքային փոքր տներում գտնվող անձանց խնամքի հետ կապված՝ այդ հաստատությունների կողմից վճարովի, մասնակի հատուցմամբ և անվճար մատուցվող ծառայությունների նկատմամբ:

22. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի N 2036-Ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

08.05.2025թ. N 567-Ն

Հրապարակումը

12.05.2025թ.

Ուժի մեջ է

13.05.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=206720>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2024 թվականի դեկտեմբերի 19-ի «Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծվող սերուցքային կարագի նկատմամբ սակագնային արտոնություն կիրառելու, ներմուծման բաշխման կարգը, մեկանգամյա և գլխավոր լիցենզիաների ձևերը հաստատելու մասին» N 2036-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում.

1. Հայտատուները 2025 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 16-ը իրավունք ունեն հրաժարվելու իրենց հատկացված ներմուծման թույլատրելի ծավալից՝ ամբողջությամբ: Հայտատուները 2025 թվականի մայիսի 13-ից մինչև մայիսի 16-ը իրավունք ունեն մասնակի հրաժարվելու իրենց հատկացված ներմուծման թույլատրելի ծավալից: Այն դեպքում, երբ հայտատուն հրաժարվում է իրեն հատկացված ներմուծման թույլատրելի ծավալից մասնակի, տրամադրված լիցենզիայի գործողությունը դադարեցվում է և 2 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրվում է նոր լիցենզիա, որտեղ նշվում է իրեն հատկացված ներմուծման նոր թույլատրելի ծավալը: Հայտատուին հատկացված ծավալից հրաժարվելու մասին դիմումը ներկայացվում է լիազոր մարմին էլեկտրոնային եղանակով (էլեկտրոնային հասցեն՝ secretariat@mineconomy.am), փոստային առաքմամբ կամ առձեռն: Էլեկտրոնային եղանակով դիմելու դեպքում դիմումն անհրաժեշտ է ներկայացնել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ էլեկտրոնային թվային ստորագրությամբ:

2. Ներմուծման թույլատրելի ծավալի չբաշխված քանակությունից ներմուծման նոր թույլատրելի ծավալ ստանալու համար հայտատուները 2025 թվականի մայիսի 19-ից մինչև մայիսի 23-ը լիազոր մարմին են ներկայացնում հայտ, ինչպես նաև Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2024 թվականի նոյեմբերի 29-ի N 106 որոշմամբ նախատեսված՝ արտոնության տրամադրման պայմանների պահպանումը հավաստող փաստաթուղթ:

3. Զբաղխված ներմուծման թույլատրելի ծավալը լիազոր մարմնի կողմից բաշխվում է պատմական գնորդների և արտաքին տնտեսական գործունեության այլ մասնակիցների միջև՝ հավասարաչափ, բայց ոչ ավելի, քան իր կողմից խնդրարկված ծավալը:

23. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի N 1251-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

08.05.2025թ. N 570-Ն

Հրապարակումը

14.05.2025թ.

Ուժի մեջ է

01.09.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=206803>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2010 թվականի սեպտեմբերի 9-ի «Պետական գրանցման ենթակա տրանսպորտային միջոցների տեսակների ցանկը, տրանսպորտային միջոցների պետական հաշվառման կարգը, պետական գրանցման և

պետական հաշվառման համար պարտադիր ներկայացվող փաստաթղթերի ցանկերը, տրանսպորտային միջոցի սեփականության իրավունքի պետական գրանցման վկայականի, պետական հաշվառման ազգային ու միջազգային վկայագրերի և «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման վկայագրի ձևերը, «Ժամանակավոր ներմուծում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետություն ներմուծված տրանսպորտային միջոցների հաշվառման կարգը, հաշվառման համարանիշերին ներկայացվող պահանջները, ինչպես նաև տրանսպորտային միջոցների համարանիշերի հաշվառման ու հատկացման կարգը սահմանելու, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի նոյեմբերի 30-ի N 1853-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2007 թվականի օգոստոսի 30-ի N 1041-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1251-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում՝ ամբողջությամբ թվայանցվել է տրանսպորտային միջոցի հասարակ գրավոր գործարքի կատարումը և դրանից ծագող տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի, ինչպես նաև գրավի կամ լիզինգի պայմանագրով վարձակալության իրավունքի պետական գրանցումը և հասարակ գրավոր գործարքի կատարմամբ միաժամանակ տրանսպորտային միջոցի նկատմամբ սեփականության իրավունքի պետական գրանցում և հաշվառումն, այդ թվում՝ նախատեսվել է անձի ցանկությամբ թվային հաշվառման վկայագիր ունենալու, հաշվառման համարանիշերը չփոխարինելու, իսկ դրանց փոխարինելու դեպքում փոստային առաքմամբ դրանք ստանալու հնարավորություններ:

24. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին»
ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

15.05.2025թ. N 595-Ն

Հրապարակումը

15.05.2025թ.

Ուժի մեջ է

25.05.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=206877>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ուժը կորցրած են ճանաչվել.

1. ՀՀ կառավարության 1995 թվականի դեկտեմբերի 29-ի «Հայաստանի Հանրապետությունում ապրանքների (աշխատանքների, ծառայությունների) ներմուծման և արտահանման ոչ տարիֆային կարգավորման մասին» N 124 որոշումը.

2. ՀՀ կառավարության 2000 թվականի դեկտեմբերի 27-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային տարածքով ապրանքների և տրանսպորտային միջոցների տարանցիկ փոխադրման ու պարտադիր մաքսային ուղեկցման դեպքերը սահմանելու կարգը հաստատելու մասին» N 887 որոշումը.

3. ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 8-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների տեղափոխման կարգը հաստատելու մասին» N 4 որոշումը.

4. ՀՀ կառավարության 2001 թվականի հունվարի 18-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային օրենսգրքով սահմանված լիցենզավորման ենթակա գործունեության տեսակների լիցենզավորման կարգերը հաստատելու մասին» N 42 որոշումը.

5. ՀՀ կառավարության 2001 թվականի մարտի 9-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ցուցահանդեսների, միջազգային տոնավաճառների կամ նմանատիպ միջոցառումների շրջանակներում ներմուծվող ապրանքների համար նմուշային քանակներ սահմանելու մասին» N 177 որոշումը.

6. ՀՀ կառավարության 2001 թվականի մարտի 29-ի «Ֆիզիկական անձանց կողմից առանց մաքսատուրքի վճարման Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով տեղափոխվող ապրանքների առանձին տեսակների բնափրային չափերը հաստատելու մասին» N 251 որոշումը.

7. ՀՀ կառավարության 2001 թվականի օգոստոսի 7-ի «Մաքսատուրքի վճարումից ազատվող՝ առևտրային կազմակերպությունների կողմից իրենց կանոնադրական հիմնադրամի համալրմանն ուղղված ապրանքների ցանկը հաստատելու մասին» N 720 որոշումը.

8. ՀՀ կառավարության 2001 թվականի հոկտեմբերի 22-ի «Մաքսային մարմիններին լիազորություններ վերապահելու մասին» N 1019 որոշումը.

9. ՀՀ կառավարության 2002 թվականի հունիսի 6-ի «Հայաստանի Հանրապետություն ժամանող յուրաքանչյուր քաղաքացու կողմից առանց մաքսային վճարների վճարման «Զվարթնոց» օդանավակայանի անմաքս առևտրի խանութներից ձեռք բերված Հայաստանի Հանրապետություն ներմուծվող ապրանքների առավելագույն չափերը սահմանելու մասին» N 1043-Ն որոշումը.

10. ՀՀ կառավարության 2002 թվականի հոկտեմբերի 31-ի «Մաքսային մարմիններին պատասխանատու պահպանության հանձնված և մաքսային հսկողության ներքո պահպանվող, մաքսանենգության կամ մաքսային կանոնների խախտման անմիջական օբյեկտ համարվող որոշ ապրանքների նկատմամբ տնօրինման գործողությունների իրականացման կարգը հաստատելու մասին» N 2182-Ն որոշումը.

11. ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 3-ի «Մինչև 180 օրվա ընթացքում «Ներմուծում՝ ազատ շրջանառության համար» մաքսային ռեժիմով ներմուծված ապրանքների Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման դեպքում նախկինում դրանց ներմուծման համար գանձված մաքսային վճարների վերադարձման կարգը հաստատելու մասին» N 1929-Ն որոշումը.

12. ՀՀ կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի «Մեկ տարուց ավելի ժամկետով «Ժամանակավոր ներմուծում՝ վերամշակման համար», «Ժամանակավոր արտահանում՝ վերամշակման համար» մաքսային ռեժիմներով ապրանքների բացթողման կարգը սահմանելու մասին» N 1934-Ն որոշումը.

13. ՀՀ կառավարության 2009 թվականի հունվարի 22-ի «Վերադաս մաքսային մարմնի կողմից մաքսային գործի հետ կապված լիցենզավորման ենթակա գործունեություն իրականացնող անձանց ռեեստրի վարման կարգը հաստատելու մասին» N 69-Ն որոշումը.

14. ՀՀ կառավարության 2013 թվականի հունիսի 20-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ֆիզիկական անձանց կողմից «Ժամանակավոր ներմուծում», «Ժամանակավոր արտահանում», «Վերաներմուծում», «Վերաարտահանում» մաքսային ռեժիմներով

անձնական օգտագործման ավտոմեքենաների, ինչպես նաև միջպետական կանոնավոր ու ոչ կանոնավոր ուղևորափոխադրումներ իրականացնող տրանսպորտային միջոցների տեղափոխման և մաքսային ձևակերպումների պարզեցված կարգը սահմանելու մասին» N 670-Ն որոշումը.

15. ՀՀ կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության մաքսային սահմանով ֆիզիկական կամ իրավաբանական անձանց կողմից միջազգային փոստային կամ սուրհանդակային առաքումներով փոխադրվող ապրանքների մաքսային հայտարարագրերի պարզեցված ձևերը սահմանելու մասին» N 1461-Ն որոշումը.

16. ՀՀ կառավարության 2011 թվականի օգոստոսի 4-ի «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգով արտահանված ապրանքների նկատմամբ կիրառված «Ժամանակավոր արտահանում» մաքսային ընթացակարգի ժամկետների երկարաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության և ժամկետների երկարաձգման, ապրանքների ներմուծման դեպքում մաքսային ու հարկային մարմինների կողմից հաշվարկված ավելացված արժեքի հարկի գումարների վճարման ժամկետի հետաձգման նպատակով կազմակերպությունների ու անհատ ձեռնարկատերերի ընտրության կարգերը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի նոյեմբերի 9-ի N 1934-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2009 թվականի ապրիլի 30-ի N 600-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1119-Ն որոշումը.

17. ՀՀ կառավարության 2016 թվականի փետրվարի 18-ի «Ստուգման արդյունքներով ստուգվող ապրանքների տեղափոխման հետ կապված՝ մաքսային գործին վերաբերող օրենսդրության դրույթների խախտում չհայտնաբերվելու դեպքում առգրավված ապրանքների պահպանման ծախսերի՝ Հայաստանի Հանրապետության պետական բյուջեից փոխհատուցման կարգը սահմանելու մասին» N 135-Ն որոշումը.

18. ՀՀ կառավարության 2011 թվականի ապրիլի 14-ի «Ռիսկերի գնահատման չափանիշների մեթոդաբանությունը սահմանող լիազոր մարմին ճանաչելու մասին» N 376-Ն որոշումը.

19. ՀՀ կառավարության 2014 թվականի նոյեմբերի 6-ի «Մաքսային գործի իրականացման նպատակներով Հայաստանի Հանրապետության սահմանով տեղափոխվող ապրանքների դասակարգման համար օգտագործվող՝ արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկը հաստատելու մասին» N 1406-Ն որոշումը.

20. ՀՀ կառավարության 2015 թվականի օգոստոսի 6-ի «Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան մաքսային քաղաքականության մշակման և վարչարարության իրականացման գործառույթներ իրականացնող լիազոր մարմին ճանաչելու մասին» N 882-Ն որոշումը.

21. ՀՀ կառավարության 2015 թվականի դեկտեմբերի 17-ի «Ապրանքների նշանակման վայրերի փոփոխության դեպքերը սահմանելու մասին» N 1489-Ն որոշումը.

22. ՀՀ կառավարության 2015 թվականի մայիսի 21-ի «Լիազորված տնտեսական օպերատորի կարգավիճակ ստանալու նպատակով արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողի կողմից վերադաս մաքսային մարմին ներկայացվող ինքնագնահատման թերթիկի ձևը և լրացման կարգը սահմանելու մասին» N 590-Ն որոշումը:

25. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 7-ի N 1755-Ն որոշման մեջ փոփոխություն և լրացում կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

15.05.2025թ. N 605-Ն

Հրապարակումը

16.05.2025թ.

Ուժի մեջ է

17.05.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=206922>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն և լրացում է կատարվել ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 7-ի «Հայաստանի Հանրապետությունից մի շարք ապրանքների՝ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններ տեղափոխման և երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» N 1755-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում սահմանվել է, որ «Ժամանակավոր ներմուծում», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ձևակերպված և հետագայում վերաարտահանվող, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից ժամանակավոր օգտագործման նպատակով պայմանագրի հիման վրա Հայաստանի Հանրապետություն տեղափոխված և հետագայում վերադարձման ենթակա, Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված ԱՏԳ ԱԱ 7201, 7204, 7303 00, 7304, 7305, 7306, 7307, 7308 ծածկագրերին դասվող (իսկ 7302 ծածկագրից՝ օգտագործված ռելսերի, 7325 և 7326 ծածկագրերից՝ օգտագործված սալիկների և օգտագործված աղացագնդերի, 7322 ծածկագրից՝ օգտագործված թուջե ռադիատորների) ապրանքների վրա, ԱՏԳ ԱԱ 7404 00, 7503 00, 7602 00, 7802 00 000, 7902 00 000, 8002 00 000, 8101 97 000, 8102 97 000, 8103 30 000, 8104 20 000, 8105 30 000, 8106, 8112 61 00, 8108 30 000, 8109 3, 8110 20 000, 8111 00 190, 8112 13 000, 8112 22 000, 8112 31 000 0, 8112 41 000 1, 8112 52 000, 8112 92 210, 8113 00 400 ծածկագրերին դասվող գունավոր մետաղի թափոնների և ջարդոնի վրա և ԱՏԳ ԱԱ 8415-8417, 8419-8421, 8425-8426, 8428, 8435, 8438, 8449 00 000 0, 8454-8466, 8474-8475, 8477, 8481, 8482-8484, 8487, 8502-8504, 8507, 8514, 8516, 8544, 8549 ծածկագրերին դասվող օգտագործված կամ սպառված կամ թափոն և ջարդոն հանդիսացող ապրանքների վրա, որոնք փոխադրման (մատակարարման) գործարքի պայմանները (այդ թվում՝ որակի, երաշխիքի պայմանները) չկատարելու պատճառով Հայաստանի Հանրապետությունից վերադարձվում են գործարքի շրջանակներում վերանորոգման (կամ փոխարինման) համար՝ այն վերադարձնելու պայմանով, իսկ ԱՏԳ ԱԱ 8415-8417, 8419-8421, 8425-8426, 8428, 8435, 8438, 8449 00 000 0, 8454-8466, 8474-8475, 8477, 8481, 8482-8484, 8487, 8502-8504, 8507, 8514, 8516, 8544, 8549 ծածկագրերին դասվող օգտագործված կամ սպառված կամ թափոն և ջարդոն հանդիսացող ապրանքներից «Ժամանակավոր արտահանում» և «Վերամշակում՝ մաքսային տարածքից դուրս» մաքսային ընթացակարգերով արտահանվող և հետագայում ներմուծվող, իսկ ԱՏԳ ԱԱ 7308 ծածկագրից՝ 7308 40 ծածկագրին դասվող սև մետաղից բեմային կոնստրուկցիաների՝ «Ժամանակավոր արտահանում» ընթացակարգով արտահանվող և հետագայում ներմուծվող, ԱՏԳ ԱԱ 7308 90 ծածկագրին դասվող սև մետաղից չօգտագործված մետաղակոնստրուկցիաների, ինչպես նաև Հայաստանի Հանրապետությունում արտադրված ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 7201, 7204 ծածկագրերին դասվող ապրանքների, 7302 ծածկագրից՝ օգտագործված ռելսերի,

7325 և 7326 ծածկագրերից՝ օգտագործված սալիկների և օգտագործված աղացագներին, 7322 ծածկագրից՝ օգտագործված թուջե ռադիատորների և ԱՏԳ ԱԱ ծածկագրերին դասվող ապրանքների) ապրանքների վրա:

Միաժամանակ, թույլատրվել է ընդհանուր մինչև 400 տոննա ԱՏԳ ԱԱ 7404 00 990 0 ծածկագրին դասվող պղնձի, երկաթի և նիկելի (5% և ավելի) պարունակությամբ համաձուլվածքներից ջարդոնի կամ թափոնի, ինչպես նաև՝ ԱՏԳ ԱԱ 8109 39 000 0 ծածկագրին դասվող մինչև 3 տոննա ցիրկոնիումի ջարդոնի կամ թափոնի Եվրասիական տնտեսական միության երկրներ տեղափոխումը կամ երրորդ երկրներ արտահանումը:

26. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի N 1418-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

22.05.2025թ. N 616-Ն

Հրապարակումը

22.05.2025թ.

Ուժի մեջ է

23.05.2025թ.

Հղում

<https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=207204>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել ՀՀ կառավարության 2023 թվականի օգոստոսի 24-ի «Հսկիչ (նույնականացման) նշաններով դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառության նկատմամբ մոնիտորինգի տեղեկատվական համակարգի ներդրման առանձնահատկությունները հաստատելու մասին» N 1418-Ն որոշման մեջ, որի արդյունքում հստակեցվել է դրոշմավորման ընթացքում կիրառվող որոշ հասկացություններ, դրոշմավորման ծածկագրերի կարգավիճակները, պատասխանատվության կիրառության առումով դրոշմավորման կանոնի խախտում, ինչպես նաև չդրոշմավորված ապրանքների օտարում համարվելու դեպքերը:

27. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի N 1699-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

22.05.2025թ. N 618-Ն

Հրապարակումը

22.05.2025թ.

Ուժի մեջ է

01.06.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=207200>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2023 թվականի հոկտեմբերի 5-ի «Հայաստանի Հանրապետությունում «Արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկ» (ԱՏԳ ԱԱ) դասակարգչի 2204, 2205, 2206 00, 2207 և 2208 ծածկագրերին դասվող ապրանքների՝ Եվրասիական տնտեսական միության շրջանակներում նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» N 1699-Ն որոշման մեջ, որի արդյունքում սահմանվել է, որ՝

1. 2026 թվականի հունվարի 1-ից սկսած ներկայացված հայտերի հիման վրա ստացված դրոշմապիտակների վերաբերյալ ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների վերագրման, հաշվառման էլեկտրոնային համակարգի միջոցով էլեկտրոնային եղանակով գրանցումներ ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների համար չեն կարող կատարվել,

2. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորումը կարող է իրականացվել նաև մինչև 2026 թվականի հունվարի 1-ը,

3. ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման դեպքում, հարկ վճարողի կողմից այդ ապրանքների դրոշմավորումը դրոշմապիտակներով չի կարող իրականացվել:

Միաժամանակ, ԱՏԳ ԱԱ 2208 ծածկագրին դասվող՝ մինչև 9 տոկոս ներառյալ սպիրտայնություն ունեցող ապրանքներ ներմուծող կազմակերպությունները և անհատ ձեռնարկատերերը նույնականացման միջոցներով ապրանքների դրոշմավորումը կարող են իրականացնել «ներքին սպառման համար բացթողում» կամ «վերաներմուծում» մաքսային ընթացակարգերով ձևակերպելուց հետո՝ հետևյալ պահանջները բավարարող պահեստում՝

- պահեստը պետք է լինի դրոշմավորման ենթակա ապրանքներ ներմուծող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերին սեփականության իրավունքով պատկանող կամ պայմանագրային հիմունքներով՝ վարձակալված կամ այլ պայմանագրային համաձայնությամբ օգտագործվող, ինչպես նաև դրոշմավորման ենթակա ապրանքների դրոշմավորումը կարող է կատարվել այլ իրավաբանական անձանց կամ անհատ ձեռնարկատերերի կողմից՝ դրոշմավորման ենթակա ապրանքների շրջանառություն իրականացնող իրավաբանական անձանց և անհատ ձեռնարկատերերի հետ կնքված համապատասխան ծառայությունների մատուցման պայմանագրի հիման վրա.

- պահեստում դրոշմավորման ենթակա ապրանքները պետք է գտնվեն գնորդի համար ոչ տեսանելի վայրում, տեղադրված չլինեն ցուցադրման համար:

28. Փաստաթուղթ

Ամսաթիվը և համարը

Հրապարակումը

Ուժի մեջ է

Հղում

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի N 1815-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության որոշում

22.05.2025թ. N 619-Ն

22.05.2025թ.

23.05.2025թ.

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=207205>

Որոշմամբ ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2024 թվականի նոյեմբերի 21-ի «ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0103 92 ծածկագրին դասվող ընտանի տեսակների կենդանի խոզերի՝ Հայաստանի Հանրապետության տարածք ներմուծման ժամանակավոր քանակական սահմանափակում կիրառելու և ներմուծման ընթացակարգը հաստատելու մասին» N 1815-Ն որոշումը:

29. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի փետրվարի 6-ի N 125-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	22.05.2025թ. N 644-Ն
Հրապարակումը	23.05.2025թ.
Ուժի մեջ է	24.05.2025թ.
Հղում	https://arlis.am/DocumentView.aspx?DocID=207263

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության 2025 թվականի փետրվարի 6-ի «Հայաստանի Հանրապետությունում նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա մի շարք ապրանքների ցանկը, դրոշմավորման ներդրման ժամկետները և ցանկում ներառված ապրանքների՝ նույնականացման միջոցներով դրոշմավորման կանոնները հաստատելու մասին» N 125-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում սահմանվել են Հայաստանի Հանրապետությունում 2026 թվականի հունվարի 1-ից նույնականացման միջոցներով դրոշմավորման ենթակա ապրանքները:

30. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի N 102-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	29.05.2025թ. N 666-Ն
Հրապարակումը	29.05.2025թ.
Ուժի մեջ է	30.05.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/207569

Համառոտ նկարագիր

Որոշմամբ կատարված փոփոխությունների համաձայն ՀՀ կառավարության 2020 թվականի հունվարի 30-ի «Հայտարարատու պաշտոնատար անձի գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի եկամուտների և ծախսերի տարեկան հայտարարագրի, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնական պարտականությունները ստանձնելու օրվա դրությամբ առկա գույքի,

եկամուտների և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի և եկամուտների, հայտարարատու պաշտոնատար անձի՝ պաշտոնեական պարտականությունները դադարեցնելու օրվա դրությամբ առկա գույքի, եկամուտների, ծախսերի և շահերի, նրա ընտանիքի անդամների գույքի, եկամուտների և ծախսերի հայտարարագրի օրինակելի ձևերը սահմանելու մասին» N 102-Ն որոշման իրավակարգավորումները համապատասխանեցվել են «Հանրային ծառայության մասին» օրենքի պահանջներին:

Որոշմամբ սահմանված հավելվածներով հաստատված հայտարարագիրը լրացվել է լրացուցիչ հրապարակային տեղեկությունների համար նախատեսված դաշտով: Հայտարարատուի կողմից հայտարարագրման ենթակա անշարժ գույքը և տրանսպորտային միջոցը արտերկրում գտնվելու պարագայում ևս ենթակա է հայտարարագրման:

31. Փաստաթուղթ

«Հաշվարկային փաստաթղթերում ապրանքների արտաքին տնտեսական գործունեության ապրանքային անվանացանկի ծածկագրերը ներառելու դեպքերը, կարգը և ժամկետները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

29.05.2025թ. N 679-Ն

Հրապարակումը

29.05.2025թ.

Ուժի մեջ է

01.09.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=207591>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ՝

1. ապրանքների, բացառությամբ անշարժ գույքի և «ԵՏՄ մաքսային տարածք ներմուծված ապրանքների հետազոտության մեխանիզմի մասին» համաձայնագրի համաձայն հետազոտության ենթակա ապրանքների, մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով էլեկտրոնային եղանակով դուրս գրվող հաշվարկային փաստաթղթերում (հարկային հաշիվ, ճշգրտող հարկային հաշիվ, հաշիվ վավերագիր, ճշգրտող հաշիվ վավերագիր և բեռնագիր) պետք է լրացվեն ապրանքների ԱՏԳ ԱԱ ծածկագրերը: ԱՏԳ ԱԱ ծածկագրերը լրացվելու են առանձին սյունակով՝ 4 նիշի մակարդակով,

2. հաշվարկային փաստաթղթերում ԱՏԳ ԱԱ ծածկագրերը պարտադիր լրացնելու պահանջը կիրառվելու է՝

- 2025թ. սեպտեմբերի 1-ից՝ ներմուծողների կողմից ՀՀ տարածք ներմուծված ապրանքների մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով և ՀՀ ներմուծված և ՀՀ-ում արտադրված հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա ԱՏԳ ԱԱ 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային արտադրանքի և 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային արտադրանքի բոլոր մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով,

- 2025թ. նոյեմբերի 1-ից՝ արտադրողների կողմից ՀՀ-ում արտադրված ապրանքների, բացառությամբ հսկիչ (նույնականացման) նշաններով պարտադիր դրոշմավորման ենթակա ԱՏԳ ԱԱ 2402, 2404 11 000 9, 2404 12 000 0, 2404 19 000 ծածկագրերին դասվող ծխախոտային

արտադրանքի և 2204, 2205, 2206 00, 2207, 2208 ծածկագրերին դասվող ալկոհոլային արտադրանքի, մատակարարման կամ տեղափոխման գործարքների մասով,

- 2026թ. հունվարի 1-ից՝ ապրանքների մատակարարման կամ տեղափոխման մնացած գործարքների մասով:

32. Փաստաթուղթ

«Մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) ձևը և դրա տրման կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

05.06.2025թ. N 712-Ն

Հրապարակումը

06.06.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/207886>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել են մշակութային արժեքների ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացության (թույլատրող փաստաթղթի) տրման կարգը և ձևը:

33. Փաստաթուղթ

«Օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման, հարկային մարմնի կողմից այդպիսի իրավասու մարմիններից տեղեկության ստացման կարգերը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

05.06.2025թ. N 718-Ն

Հրապարակումը

06.06.2025թ.

Ուժի մեջ է

16.06.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/207883>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններին ֆինանսական հաշիվների մասին տեղեկության փոխանցման կարգը, հարկային մարմնի կողմից օտարերկրյա պետությունների (տարածքների) իրավասու մարմիններից ֆինանսական հաշիվների մասին տեղեկության ստացման կարգը, ինչպես նաև փոխանցված ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների պահպանության պահանջները:

34. Փաստաթուղթ

«Մշակութային արժեքների վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

05.06.2025թ. N 734-Ն

Հրապարակումը

06.06.2025թ.

Ուժի մեջ է

01.01.2026թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/207956>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է մշակութային արժեքների վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգը:

35. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի N 98-Ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

05.06.2025թ. N 739-Ն

Հրապարակումը

09.06.2025թ.

Ուժի մեջ է

10.06.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/207963>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ և լրացումներ են կատարվել ՀՀ կառավարության կառավարության 2025 թվականի հունվարի 23-ի «Արտահանման խթանման նպատակով օժանդակության տրամադրման ծրագիրը հաստատելու մասին» N 98-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում սահմանվել է, որ ծրագրով նախատեսված օժանդակությունը տրամադրվելու է 2025 թվականի փետրվարի 1-ից մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ կատարված արտահանումների համար, իսկ թիրախային երկրների ցանկում ավելացվել է նաև Կանադան:

Միաժամանակ, որոշմամբ սահմանված՝ արտահանողի նկատմամբ հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով պարտավորություններ գանձելու վերաբերյալ վարչական վարույթ հարուցված չլինելու դրույթը փոխարինվել է արտահանողի նկատմամբ հայտի ներկայացման օրվան նախորդող 365 օրերի ընթացքում հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով մեկ միլիոն դրամ և ավելի հարկային պարտավորությունների մասով գանձման որոշման բացակայությամբ և հայտի

ներկայացման օրվան նախորդող օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորություններ չունենալու դրույթով, իսկ ներմուծվող երկրի մաքսային մարմնի կողմից արտահանողի արտահանած ապրանքի համար փաստացի կիրառված մաքսատուրքի դրույքաչափի վերաբերյալ, այդ թվում՝ զրոյական դրույքաչափ սահմանված լինելու, հակագնագցման մաքսատուրք կիրառված լինելու կամ չլինելու վերաբերյալ տեղեկանքի անհրաժեշտության դրույթն այլևս կիրառելի չէ:

36. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի N 765-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

12.06.2025թ. N 767-Ն

Հրապարակումը

13.06.2025թ.

Ուժի մեջ է

01.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=208089>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացումներ և փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության կառավարության 2004 թվականի մայիսի 20-ի «Հսկվող ապրանքների և հսկվող ոչ նյութական արժեքների մասնագիտական փորձաքննության անցկացման կարգի մասին» N 765-Ն որոշման մեջ, որոնց արդյունքում սահմանվել են՝

1. փորձաքննություն իրականացնող անձանց կողմից տրամադրվող փորձաքննության եզրակացության մեջ՝ փորձաքննության օբյեկտ համարվող ապրանքի նկարագրի, մոդելի, մակնիշի, արտիկուլի մասով պարտադիր նշման ենթակա տեղեկությունները,
2. փորձագիտական կազմակերպության կողմից պետական եկամուտների կոմիտեին եզրակացության ներկայացման ժամկետները,
3. փորձագիտական եզրակացությանը կից՝ փորձաքննության օբյեկտ համարվող ապրանքի նկատմամբ մաքսային հսկողության իրականացման համար անհրաժեշտ տեղեկությունները, այդպիսի տեղեկությունների տրամադրման ձևաչափը,
4. փորձագիտական եզրակացության տրամադրման եղանակը՝ էլեկտրոնային համակարգով, իսկ մինչև դրա գործարկումը՝ էլեկտրոնային փոստի միջոցով:

37. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1317-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.06.2025թ. N 787-Ն

Հրապարակումը

20.06.2025թ.

Ուժի մեջ է

21.06.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=208453>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել ՀՀ կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի «Ավելացված արժեքի հարկից ազատման արտոնությունների կիրառության շրջանակները սահմանելու մասին» N 1317-Ն որոշման դրույթներում՝ վերջիններս համապատասխանեցնելով «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին» 2024 թվականի հոկտեմբերի 2-ի ՀՕ-353-Ն ՀՀ օրենքի դրույթներին: Կատարված փոփոխությունները վերաբերում են հաշմանդամություն ունեցող անձանց (երեխաների) խնամող հաստատությունների և աջակցող միջոցների մասով ԱԱՀ-ից ազատման արտոնությունների շրջանակների սահմանմանը:

38. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունից երկաթի և չլեգիրված պողպատի, երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկների, լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով պողպատի, զտված պղնձի և չմշակված պղնձային համաձուլվածքների, չմշակված ալյումինի, ալյումինի փոշիների և թեփուկների՝ դեպի երրորդ երկրներ արտահանման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.06.2025թ. N 795-Ն

Հրապարակումը

20.06.2025թ.

Ուժի մեջ է

02.07.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=208450>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7206՝ երկաթ և չլեգիրված պողպատ՝ ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով (բացի 7203 ապրանքային դիրքի երկաթից), 7207՝ երկաթից կամ չլեգիրված պողպատից կիսապատրաստուկներ, 7224՝ այլ պողպատ՝ լեգիրված ձուլակտորներով կամ այլ սկզբնական ձևերով, կիսապատրաստուկներ այլ լեգիրված պողպատից, 7403՝ զտված պղինձ և չմշակված պղնձային համաձուլվածքներ, 7601՝ չմշակված ալյումին, 7603՝ ալյումինի փոշիներ և թեփուկներ ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանումը դեպի երրորդ (Եվրասիական տնտեսական միության անդամ երկրներ չհանդիսացող) երկրներ իրականացվում է հիմնական լիցենզիաների հիման վրա: Նշված ապրանքների արտահանման նպատակով հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև մեկ տոննայի համար: Հիմնական լիցենզիաների տրամադրման համար լիազոր մարմին է սահմանվել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությունը:

Միաժամանակ, սահմանվել են ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7206, 7207, 7224, 7403, 7601 և 7603 ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանման լիցենզիայի տրամադրման կարգն ու պայմանները, ինչպես նաև ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7206, 7207, 7224, 7403, 7601 և 7603 ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների արտահանման հիմնական լիցենզիայի ձևը:

Որոշմամբ սահմանված կարգավորումները չեն տարածվում «Ժամանակավոր ներմուծում», «Վերամշակում մաքսային տարածքում» մաքսային ընթացակարգերով ներմուծված և հետագայում վերաարտահանվող, ինչպես նաև պայմանագրի հիման վրա Եվրասիական տնտեսական միության անդամ պետություններից Հայաստանի Հանրապետություն տեղափոխված և հետագայում վերադարձվող կամ դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող պետություններ արտահանվող ապրանքների վրա:

Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 2-ից և գործում է մինչև 2026 թվականի հունվարի 2-ը:

39. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածքից սիգի ձկնկիթի արտահանման ժամանակավոր արգելք սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.06.2025թ. N 798-Ն

Հրապարակումը

20.06.2025թ.

Ուժի մեջ է

02.07.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/208435>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ վեց ամիս ժամկետով արգելք է սահմանվել Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 0302 91 000 0, 0303 91, 1604 32 001 0 և 0511 91 901 9 ծածկագրերին դասվող Հայաստանի Հանրապետության ծագում ունեցող սաղմոնազգիներին պատկանող սիգի ձկնկիթի արտահանման նկատմամբ:

40. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության տարածքից ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ալտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

20.06.2025թ. N 806-Ն

Հրապարակումը

20.06.2025թ.

Ուժի մեջ է

04.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=208449>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ Հայաստանի Հանրապետության տարածքից արտահանման ժամանակավոր արգելք է սահմանվել՝ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 7112 99 000 0 ծածկագրին դասվող ավտոմեքենաների խլացուցիչների օգտագործված կատալիզատորների կերամիկական թափոնների վրա: Որոշումն ուժի մեջ է մտնում 2025 թվականի հուլիսի 4-ից և գործում է մինչև 2026 թվականի հունվարի 4-ը ներառյալ:

41. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետության կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի N 1976-Ն որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	20.06.2025թ. N 807-Ն
Հրապարակումը	20.06.2025թ.
Ուժի մեջ է	01.09.2025թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/208456

Համառոտ նկարագիր

Որոշմամբ ՀՀ կառավարության 2020 թվականի դեկտեմբերի 3-ի «Հսկիչ դրամարկղային մեքենային և ցանցային կապի միջոցներին ներկայացվող տեխնիկական պահանջները, հսկիչ դրամարկղային մեքենան հարկային մարմնում գրանցման և գրանցումից հանման կարգը, հսկիչ դրամարկղային մեքենայի կիրառության կանոնները հաստատելու, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենայի էլեկտրոնային կտրոնի դուրս գրման կարգը, էլեկտրոնային հսկիչ դրամարկղային մեքենաների տեխնիկական պահանջները, դրանց հաշվառման, հաշվառումից հանման կարգը, դրանց միջոցով տրամադրվող էլեկտրոնային կտրոնի պարտադիր վավերապայմաններին ներկայացվող, ինչպես նաև ինտերնետային կայքին կամ էլեկտրոնային հավելվածին (էլեկտրոնային առևտրային հարթակին) ներկայացվող պահանջները, էլեկտրոնային հարթակով ուղևորափոխադրումների, կազմակերպությունների, անհատ ձեռնարկատերերի կամ ֆիզիկական անձանց կողմից մարդատար տաքսի ավտոմոբիլներով ուղևորափոխադրումների իրականացման դեպքում կիրառության կանոնները սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2017 թվականի հոկտեմբերի 5-ի N 1318-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 1976-Ն որոշմամբ կիրառվող հասկացությունները համապատասխանեցվել են ՀՀ հարկային օրենսգրքի դրույթներին: Մասնավորապես՝ որոշման մեջ կիրառվող «ապրանքային դիրք» հասկացությունը փոխարինվել է «ԱՏԳ ԱԱ ծածկագիրը» հասկացությամբ:

42. Փաստաթուղթ	«Հայաստանի Հանրապետությունից Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ մի շարք ապրանքների արտահանման ժամանակավոր արգելք կիրառելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26.06.2025թ. N 833-Ն
Հրապարակումը	26.06.2025թ.
Ուժի մեջ է	05.07.2025թ.

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ Հայաստանի Հանրապետությունից դեպի Եվրասիական տնտեսական միության անդամ չհանդիսացող երկրներ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 1001 19 000 0, 1001 99 000 0, 1003 90 000 0, 1005 90 000 0, 1008 10 000, 1206 00 990 0, 1512 11 910, 1512 19 900 2, 1512 19 900 9 ծածկագրերին դասվող ապրանքների (ցորեն, մեսլին, գարի, եգիպտացորեն, հնդկացորեն, արևածաղկի սերմ, արևածաղկի ձեթ) արտահանումն արգելվում է վեց ամիս ժամկետով: Միաժամանակ, արգելքը չի տարածվում Հայաստանի Հանրապետություն ներմուծված և «Վերաարտահանում» մաքսային ընթացակարգով Հայաստանի Հանրապետությունից արտահանվող ապրանքների վրա:

43. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետությունում խաղային գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը

26.06.2025թ. N 855-Ն

Հրապարակումը

27.06.2025թ.

Ուժի մեջ է

«Խաղային գործունեության կարգավորման մասին» օրենքի 23-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված կարգով օպերատոր սահմանելու օրվանից հետո՝ վեցերորդ ամիսը լրանալու հաջորդ օրը:

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/208794>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է ՀՀ խաղային գործունեության կազմակերպման լիցենզավորման կարգը: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2004 թվականի հուլիսի 29-ի «Շահումով խաղերի և խաղատների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի կիրարկումն ապահովելու մասին» N 1164-Ն որոշումը:

Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահին՝ խաղային գործունեության կազմակերպման լիցենզիա ունեցող անձանց կողմից հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով 10 և ավելի օր պարտավորություններ (այդ թվում՝ տույժեր և տուգանքներ) ունենալու դեպքում, իսկ վճարների գծով ժամկետանց պարտավորություններ (այդ թվում՝ տույժեր և տուգանքներ) ունենալու դեպքում դրա մասին՝ փաստի արձանագրման պահից 5-օրյա ժամկետում պետք է տեղեկացնի Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը:

Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարին՝ 5-օրյա ժամկետում՝ խաղային գործունեության կազմակերպման լիցենզիա տալու, լիցենզիան վերաձևակերպելու, լիցենզիայի գործողությունը կասեցնելու, լիցենզիայի գործողության կասեցումը վերացնելու, լիցենզիայի

գործողությունը դադարեցնելու և գործունեության իրականացման վայրը փոփոխելու մասին պետք է տեղեկացնի Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեն:

44. Փաստաթուղթ	«Մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգը հաստատելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26.06.2025թ. N 864-Ն
Հրապարակումը	27.06.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://old.arlis.am/DocumentView.aspx?DocID=208832

Համառոտ նկարագիր

Որոշմամբ հաստատվել է մշակութային արժեքների արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգը: Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել ՀՀ կառավարության 2005 թվականի հունիսի 23-ի «Մշակութային արժեքների արտահանման կամ ժամանակավոր արտահանման իրավունքի եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգը և ձևը հաստատելու մասին» N 981-Ն որոշումը:

45. Փաստաթուղթ	«Հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգն ու չափանիշները սահմանելու մասին» ՀՀ կառավարության որոշում
Ամսաթիվը և համարը	26.06.2025թ. N 867-Ն
Հրապարակումը	27.06.2025թ.
Ուժի մեջ է	01.01.2026թ.
Հղում	https://www.arlis.am/hy/acts/208828

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) արտահանման լիցենզիա (եզրակացություն) տալու կարգն ու չափանիշները:

46. Փաստաթուղթ	«Հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) ժամանակավոր արտահանման և վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման
-----------------------	---

Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

Եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգն ու չափանիշները հաստատելու մասին» ՀՀ
կառավարության որոշում
26.06.2025թ. N 870-Ն
27.06.2025թ.
01.01.2026թ.
<https://www.arlis.am/hy/acts/208837>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել են հանքագիտության և հնէաբանության հավաքածուների (առարկաների) ժամանակավոր արտահանման և վերամշակման՝ մաքսային տարածքից դուրս մաքսային ընթացակարգերով արտահանման եզրակացություն (թույլատրող փաստաթուղթ) տալու կարգն ու չափանիշները:

47. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետություն ցեմենտի ներմուծման ժամանակավոր սահմանափակում կիրառելու, ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը սահմանելու մասին» ՀՀ
կառավարության որոշում

Ամսաթիվը և համարը
Հրապարակումը
Ուժի մեջ է
Հղում

26.06.2025թ. N 873-Ն
30.06.2025թ.
21.07.2025թ.
<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=208929>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2523100000, 2523210000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծումն իրականացվում է հիմնական լիցենզիաների հիման վրա: Ընդ որում նշված ապրանքների ներմուծման նպատակով հիմնական լիցենզիան տրամադրվում է յուրաքանչյուր մինչև հարյուր տոննայի համար:

Միաժամանակ, սահմանվել է ԵԱՏՄ ԱՏԳ ԱԱ 2523 (բացառությամբ ԱՏԳ ԱԱ 2523100000, 2523210000) ապրանքային դիրքի ծածկագրերին դասվող ապրանքների «Բացթողում՝ ներքին սպառման համար», «Վերամշակում՝ մաքսային տարածքում» և «Վերամշակում՝ ներքին սպառման համար» մաքսային ընթացակարգերով ներմուծման լիցենզավորման ընթացակարգը և հիմնական լիցենզիայի ձևը:

48. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի N 299-Ն հրամանում լրացում և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

07.04.2025թ. N 420-Ն

Հրապարակումը

09.04.2025թ.

Ուժի մեջ է

10.04.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=205432>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2016 թվականի դեկտեմբերի 30-ի «Շրջանառության հարկի հաշվարկի ձևը և դրա լրացման կարգը հաստատելու մասին» N 299-Ն հրամանի դրույթները համապատասխանեցվել են «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՕ-72-Ն օրենքով կատարված փոփոխությանը:

49. Փաստաթուղթ

«Մաքսային մարմինների կողմից տարածքների և շինությունների մաքսային տեսազննման իրականացման կարգադրագրի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հուլիսի 26-ի N 239-Ն հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

26.05.2025թ. N 643-Ն

Հրապարակումը

30.05.2025թ.

Ուժի մեջ է

31.05.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=207621>

Համառոտ նկարագիր

Հրամանով սահմանվել է մաքսային մարմինների կողմից տարածքների և շինությունների մաքսային տեսազննման իրականացման կարգադրագրի ձևը:

Միաժամանակ, ուժը կորցրած է ճանաչվել Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հուլիսի 26-ի «Տարածքների և շինությունների մաքսային զննման անցկացման հրամանի ձևը սահմանելու մասին» N 239-Ն հրամանը:

50. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի N 558-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

27.06.2025թ. N 817-Ն

Հրապարակումը

03.07.2025թ.

Ուժի մեջ է

04.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=209025>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2019 թվականի օգոստոսի 27-ի «Միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարությունների, անհատ ձեռնարկատեր չհանդիսացող ֆիզիկական անձի միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ արտոնագրի և միկրոձեռնարկատիրության սուբյեկտի իրացման շրջանառության վերաբերյալ հաշվետվության ձևերը հաստատելու մասին» N 558-Ն հրամանում լրացումներ են կատարվել, որոնց արդյունքում հրամանի N 1 հավելվածով հաստատված՝ միկրոձեռնարկատիրության սուբյեկտ համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը համապատասխանեցվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 26.03.2025թ. ՀՕ-72-Ն և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 29.05.2025թ. ՀՕ-175-Ն օրենքներով կատարված փոփոխություններին:

51. Փաստաթուղթ

«Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27-ի N 191-Ն հրամանում լրացումներ կատարելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի հրաման

Ամսաթիվը և համարը

27.06.2025թ. N 818-Ն

Հրապարակումը

03.07.2025թ.

Ուժի մեջ է

04.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=209023>

Համառոտ նկարագիր

Հրամանով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի 2017 թվականի հունիսի 27-ի «Շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը հաստատելու մասին» N 191-Ն հրամանում լրացումներ են կատարվել, որոնց արդյունքում հրամանի

հավելվածով հաստատված՝ շրջանառության հարկ վճարող համարվելու վերաբերյալ հայտարարության ձևը համապատասխանեցվել է «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 26.03.2025թ. ՀՕ-72-Ն և «Հայաստանի Հանրապետության հարկային օրենսգրքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» 29.05.2025թ. ՀՕ-175-Ն օրենքներով կատարված փոփոխություններին:

52. Փաստաթուղթ

«Ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և տեղեկությունների ձևաչափը սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի և ՀՀ կենտրոնական բանկի համատեղ հրաման

Ամսաթիվը և համարը

30.04.2025թ. N 542-Ն

Հրապարակումը

23.06.2025թ.

Ուժի մեջ է

03.07.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=208546>

Համառոտ նկարագիր

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի և ՀՀ կենտրոնական բանկի նախագահի համատեղ հրամանով սահմանվել է ֆինանսական հաստատության կողմից հաշվետերերի և վերահսկող անձանց ֆինանսական հաշիվների մասին տեղեկությունների տրամադրման կարգը և ձևաչափը:

53. Փաստաթուղթ

«Պետական եկամուտների կոմիտեի կողմից բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը տրամադրվող տեղեկությունների շրջանակը տրամադրման հետ կապված հարաբերությունները սահմանելու մասին» ՀՀ պետական եկամուտների կոմիտեի նախագահի և ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարի համատեղ հրաման

Ամսաթիվը և համարը

24.06.2025թ. N 793-Ն

Հրապարակումը

26.06.2025թ.

Ուժի մեջ է

27.06.2025թ.

Հղում

<https://www.arlis.am/hy/acts/208711>

Համառոտ նկարագիր

Համատեղ հրամանով սահմանվել են ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությանը տրամադրվող տեղեկությունների շրջանակը և տրամադրման կարգը:

Միաժամանակ, սահմանվել է, որ հրամանն ուժի մեջ մտնելու օրվան հաջորդող օրվանից մինչև բարձր տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցությունների տրամադրման համար նախատեսված հարթակի (benefits.hightech.gov.am) լիարժեք ինքնաշխատ գործարկմանը հաջորդող 30-րդ օրացուցային օրվան հաջորդող աշխատանքային օրը, վերոնշյալ տեղեկությունների տրամադրման նպատակով ՀՀ պետական եկամուտների կոմիտեն ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարության համար ապահովում է արտաքին օգտվողի ժամանակավոր մուտքի հնարավորություն՝ ՀՀ պետական եկամուտների կոմիտեի անալիտիկ-վերլուծական համակարգին (BI-business intelligence), որի միջոցով ՀՀ բարձր տեխնոլոգիական արդյունաբերության նախարարությունը տվյալներ է ստանում:

54. Փաստաթուղթ

«Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային մարմինների կողմից տրանսպորտային (փոխադրման) և առևտրային փաստաթղթերի վրա մաքսային մարմինների կնիքները և դրոշմակնիքները դնելու կարգի մասին» համաձայնագիրը հաստատելու մասին» ՀՀ նախագահի հրամանագիր

Ամսաթիվը և համարը

16.05.2025թ. N ՆՀ-116-Ն

Հրապարակումը

16.05.2025թ.

Ուժի մեջ է

17.05.2025թ.

Հղում

<https://arlis.am/DocumentView.aspx?DocID=206928>

Համառոտ նկարագիր

ՀՀ նախագահի հրամանագրով հաստատվել է «Անկախ պետությունների համագործակցության մասնակից պետությունների մաքսային մարմինների կողմից տրանսպորտային (փոխադրման) և առևտրային փաստաթղթերի վրա մաքսային մարմինների կնիքները և դրոշմակնիքները դնելու կարգի մասին» համաձայնագիրը:

55. Փաստաթուղթ

«Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի սեպտեմբերի 20-ի N 378 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

01.04.2025թ. N 32

Հրապարակումը

04.04.2025թ.

Ուժի մեջ է

04.05.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 20.09.2010թ. N 378 որոշման մեջ: Մասնավորապես, լրացվել են մաքսային հայտարարագրում լրացվող առանձին տեղեկությունների դասակարգիչներ՝ մաքսային վճարների արտոնությունների և տրանսպորտային միջոցների մակնիշների մասով:

56. Փաստաթուղթ

«Ինքնագնաց ստորգետնյա լեռնահանքային մեքենայի՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան դասակարգման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

08.04.2025թ. N 33

Հրապարակումը

11.04.2025թ.

Ուժի մեջ է

11.05.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ ինքնագնաց ստորգետնյա լեռնահանքային մեքենան դասակարգվում է ԱՏԳ ԱԱ 8704 ապրանքային դիրքում:

57. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2018 թվականի հոկտեմբերի 16-ի N 160 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

08.04.2025թ. N 37

Հրապարակումը

11.04.2025թ.

Ուժի մեջ է

01.04.2026թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 16.10.2018թ. «Մաքսային արժեքի հայտարարագրի լրացման դեպքերի, մաքսային արժեքի հայտարարագրի ձևերի և մաքսային արժեքի հայտարարագրի լրացման կարգի հաստատման մասին» N 160 որոշման մեջ: Մասնավորապես, մաքսային արժեքի հայտարարագրի լրացման կարգում լրացվել են մաքսային արժեքի որոշման նպատակով ապրանքների գնի լրացուցիչ հավելագրումների և առանձին ծախսերի բաշխման մասով կարգավորումներ:

58. Փաստաթուղթ

«Խողովակաձև սուզվող էլեկտրատաքացուցիչի՝ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկին համապատասխան դասակարգման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

22.04.2025թ. N 40

Հրապարակումը

23.04.2025թ.

Ուժի մեջ է

23.05.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ սահմանվել է, որ նույն որոշման նկարագրերին համապատասխանող էլեկտրատաքացուցիչը, ըստ Եվրասիական տնտեսական միության արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի հիմնական մեկնաբանության 1-ին և 6-րդ կանոնների, դասակարգվում է ԱՏԳ ԱԱ 8516 10 800 0 ենթադիրքում:

59. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի N 151 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

27.05.2025թ. N 46

Հրապարակումը

29.05.2025թ.

Ուժի մեջ է

28.06.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացում է կատարվել 2023 թվականի հոկտեմբերի 24-ի «Մաքսատուրքերը և հարկերը վճարելու պարտավորության կատարման ապահովման սերտիֆիկատի մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի N 151 որոշման մեջ՝ նախատեսելով «Մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգով ձևակերպված ապրանքների մասով մաքսատուրքերի և հարկերի վճարման պարտավորության կատարման ապահովման սերտիֆիկատի կիրառման առանձնահատկություն՝ նախկինում տրամադրված սերտիֆիկատների մասով:

60. Փաստաթուղթ

«Տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը որպես ապրանքների հայտարարագիր օգտագործելու կարգի 6-րդ կետի 3-րդ ենթակետում փոփոխություն կատարելու մասին»

Ամսաթիվը և համարը

03.06.2025թ. N 48

Հրապարակումը

05.06.2025թ.

Ուժի մեջ է

05.07.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություն է կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 2010 թվականի մայիսի 20-ի N 263 որոշման մեջ, համաձայն որի՝ որպես ապրանքների հայտարարագիր կարող են օգտագործվել տրանսպորտային (փոխադրման), առևտրային և (կամ) այլ փաստաթղթերը՝ առանց ներմուծման մաքսատուրքերի, հարկերի վճարման Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ժամանակավոր ներմուծվող քաղաքացիական ուղևորատար ինքնաթիռների համար:

61. Փաստաթուղթ

«Ծագմամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից և Ուկրաինայից և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ցինկապատ գլանվաճքների նկատմամբ հակազնագցման միջոցի գործողության ժամկետի երկարաձգման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2024 թվականի նոյեմբերի 19-ի N 127 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին»

Ամսաթիվը և համարը

10.06.2025թ. N 50

Հրապարակումը

10.06.2025թ.

Ուժի մեջ է

10.07.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ երկարաձգվել է ծագմամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից և Ուկրաինայից և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող ցինկապատ գլանվաճքների նկատմամբ հակազնագցման միջոցի գործողության ժամկետը՝ մինչև 2030 թվականի հունիսի 9-ը, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2024 թվականի նոյեմբերի 19-ի N 127 որոշումը:

62. Փաստաթուղթ

«Ձեռքով գործարկվող էլեկտրական գործիքների արտադրության համար նախատեսված առանձին բաղադրիչների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնի շրջանակում ներմուծման մաքսատուրքերի դրույքաչափերի սահմանման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

17.06.2025թ. N 55

Հրապարակումը

19.06.2025թ.

Ուժի մեջ է

Ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակումից 30 օր հետո, սակայն ոչ շուտ՝ Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի համապատասխան որոշման ուժի մեջ մտնելու ամսաթվից

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ մինչև 2029 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԱՏԳ ԱԱ 8483 40 230 2, 8536 50 800 2 և 8545 20 000 1 ծածկագրերին դասվող՝ ձեռքով գործարկվող էլեկտրական գործիքների արտադրության համար նախատեսված առանձին բաղադրիչների նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքի 0% դրույքաչափ:

63. Փաստաթուղթ

«Ծագմամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող կորոզիակայուն պողպատից պատրաստված տաք մշակմամբ ձևափոխված խողովակների նկատմամբ հակազնագցման միջոցի գործողության ժամկետի երկարաձգման և Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի 2024 թվականի դեկտեմբերի 17-ի N 145 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կոլեգիայի որոշում

Ամսաթիվը և համարը

24.06.2025թ. N 56

Հրապարակումը

24.06.2025թ.

Ուժի մեջ է

24.07.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ երկարաձգվել է ծագմամբ Չինաստանի Ժողովրդական Հանրապետությունից և Եվրասիական տնտեսական միության մաքսային տարածք ներմուծվող կորոզիակայուն պողպատից պատրաստված տաք մշակմամբ ձևափոխված խողովակների նկատմամբ հակազնագցման

միջոցի գործողության ժամկետը՝ մինչև 2030 թվականի հունիսի 23-ը, ինչպես նաև ուժը կորցրած է ճանաչվել Եվրասիական տնտեսական հանձնաժողովի կողմից 2024 թվականի դեկտեմբերի 17-ի N 145 որոշումը:

64. Փաստաթուղթ

«Մաքսային միության հանձնաժողովի 2009 թվականի նոյեմբերի 27-ի N 130 որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը

14.05.2025թ. N 24

Հրապարակումը

14.05.2025թ.

Ուժի մեջ է

23.06.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել Եվրասիական տնտեսական միության սակագնային առանձնաշնորհումների միասնական համակարգից օգտվող՝ զարգացող երկրների ցանկում:

65. Փաստաթուղթ

«Կարտոֆիլի հետ կապված Մաքսային միության հանձնաժողովի որոշ որոշումների մեջ փոփոխություններ կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը

23.05.2025թ. N 35

Հրապարակումը

23.05.2025թ.

Ուժի մեջ է

02.06.2025թ.

Հղում

<https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են կատարվել Մաքսային միության հանձնաժողովի 27.11.2009թ. N 130 որոշման մեջ՝ Ղազախստանի Հանրապետություն և Ռուսաստանի Դաշնություն ներմուծվող ԱՏԳ ԱԱ 0701 90 ծածկագրերին դասվող կարտոֆիլի նկատմամբ սակագնային արտոնության կիրառման կարգավորումների մասով:

66. Փաստաթուղթ

«Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի 2019 թվականի փետրվարի 22-ի N 64 որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը

26.05.2025թ. N 42

Հրապարակումը 26.05.2025թ.
Ուժի մեջ է 25.06.2025թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ լրացվել է ապրանքների բացթողումից հետո սակագնային առանձնաշնորհումների վերականգնման նոր դեպք և նախատեսվել են դրա կիրառման առանձնահատկություններ:

67. Փաստաթուղթ «Բամբակե թելից պատրաստված անկողնային պարագաների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական մաքսային սակագնով ներմուծման մաքսատուրքի դրույքաչափի սահմանման մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը 02.06.2025թ. N 43
Հրապարակումը 02.06.2025թ.
Ուժի մեջ է 12.06.2025թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ մինչև 2026 թվականի դեկտեմբերի 31-ը ներառյալ՝ ԱՏԳ ԱԱ 6302 21 000 0 ծածկագրին դասվող բամբակե թելից պատրաստված անկողնային պարագաների նկատմամբ սահմանվել է ներմուծման մաքսատուրքի 12% դրույքաչափ, բայց ոչ պակաս, քան 0.44 եվրո 1 կիլոգրամի համար:

68. Փաստաթուղթ «Մրգերի վերամշակման որոշ արտադրանքների նկատմամբ Եվրասիական տնտեսական միության միասնական ապրանքային անվանացանկում և միասնական մաքսային սակագնում, ինչպես նաև զգայուն ապրանքների ցանկում փոփոխություն կատարելու մասին» Եվրասիական տնտեսական հանձնաժողովի խորհրդի որոշում

Ամսաթիվը և համարը 02.06.2025թ. N 44
Հրապարակումը 02.06.2025թ.
Ուժի մեջ է 12.06.2025թ.
Հղում <https://docs.eaeunion.org/>

Համառոտ նկարագիր

Որոշմամբ փոփոխություններ են իրականացվել Եվրասիական տնտեսական միության միասնական ապրանքային անվանացանկում, միասնական մաքսային սակագնում՝ ԱՏԳ ԱԱ 2008 ապրանքային դիրքում ընդգրկված որոշ ապրանքների մասով:

ՊԵԿ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԲՆՈՒԹԱԳՐՈՂ ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ

1. ՀՀ ՊԵԿ կողմից վերահսկվող հարկային եկամուտներ և պետական տուրք							
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ			Տարվա սկզբից աճողական		
		Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %		Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	
1.1	ՀՀ ՊԵԿ կողմից ՀՀ պետական բյուջե հավաքագրված հարկային եկամուտներ և պետական տուրք (հիպոտեկային վարկի մասով փոխհատուցված եկամտային հարկի գումարը ներառյալ)	789,511,334.4	114.9%		1,356,009,434.5	114.2%	
2. Արտաքին տնտեսական գործունեություն							
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ			Տարվա սկզբից աճողական		
		Քանակ	Ապրանքա- շրջանառություն (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Ապրանքա- շրջանառություն և (հազ. դրամ)	Աճի տեմպ %
2.1	Արտաքին տնտեսական գործունեություն իրականացնողներ այդ թվում՝	11549	1,960,484.4	65.0%	14565	3,704,853.4	53.4%
2.1.1	արտահանում	1742	776,732.4	57.2%	2185	1,445,001.8	45.9%
2.1.2	ներմուծում	10933	1,183,752.0	71.3%	13890	2,259,851.6	59.6%
3. Ստուգման և ուսումնասիրության արդյունքներ ¹							
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ			Տարվա սկզբից աճողական		
		Ստուգում ների քանակ	Առաջադրված գումար ² (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Ստուգում ների քանակ	Առաջադրված գումար ² (հազ. դրամ)	Աճի տեմպ %
3.1	Համալիր հարկային ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	152	6,186,180.5	92.9%	321	18,417,756.0	110.2%
3.1.1	այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով առաջացած գումար	-	4,249,466.9	71.5%	-	12,442,495.1	111.1%

¹ Տեղեկանքում ընդգրկված են հաշվետու եռամսյակում կազմված բոլոր ակտերն ու արձանագրություններն՝ անկախ դրանց ուժի մեջ մտնելու կամ վիճարկման գործընթացում գտնվելու հանգամանքից:

² Համալիր հարկային ստուգումների և թեմատիկ ուսումնասիրությունների գծով գումարում ներառված են նաև այդ հսկողական միջոցառումների ընթացքում ներկայացված ճշգրտված հարկային հաշվարկներով առաջացած հարկային պարտավորությունները:

3.2	Լուծարային ստուգում	84	40,458.2	1.3%	168	46,174.1	1.4%
3.2.1	այդ թվում՝ ճշգրիտ հարկային հաշվարկներով առաջացած գումար	-	40,458.2	1.3%	-	45,674.1	1.4%
3.3	Տրանսֆերային գնագոյացման ստուգում (այդ թվում՝ վերստուգում)	-	-	-	-	-	-
3.4	Թեմատիկ հարկային ստուգում (ԹՍ)	2682	997,766.4	140.7%	4701	1,912,229.8	107.5%
	այդ թվում՝ թեմատիկ հարկային ստուգման հարցեր	X	X	X	X	X	X
3.4.1	Հսկիչ դրամարկղային մեքենաների կիրառման ճշտություն (ՀԴՄ)	2484	782,316.4	221.3%	4343	1,428,374.6	136.4%
3.4.2	Աշխատողի աշխատանքի ընդունումն օրենսդրությամբ սահմանված կարգով ձևակերպելու և (կամ) աշխատողի համար գրանցման հայտ ներկայացնելու ճշտություն (ՉԱ)	410	176,500.0	116.5%	734	326,750.0	119.9%
3.4.3	Պետական տուրքի հաշվարկման և գանձման ճշտություն (ՊՏ)	3	500.0	-	3	500.0	-
3.4.4	Ակցիզային դրոշմանիշերի և (կամ) դրոշմապիտակների կիրառման ճշտություն (ԱԿ/Դ)	41	0.0	0.0%	70	72,455.2	43.7%
3.4.5	«Անկանխիկ գործառնությունների մասին» ՀՀ օրենքով սահմանված դեպքերում ու կարգով վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունման, այդ թվում՝ վճարային քարտերով անկանխիկ վճարումներ ընդունելու հնարավորության ապահովման կամ կանխիկ դրամով գումարի ընդունման սահմանափակումների պահպանման ճշտություն (ԱնկանխիկԳ)	268	37,050.0	45.3%	521	82,250.0	28.0%
3.4.6	Արտարժույթի առք ու վաճառքի գործառնությունների գրանցման կարգի ու կանոնների պահպանման ճշտություն (Արտարժ)	-	-	-	-	-	-

3.4.7	Հաշվարկային փաստաթղթերի (բացառությամբ՝ ՀԴՄ կտրոնի) դուրս գրման համար սահմանված կարգի ու կանոնների պահպանման ճշտություն (ՀՓ)	-	-	-	-	-	-
3.4.8	Հարկման բազայի հաշվարկման համար հիմք հանդիսացող ապրանքների, ծառայությունների և աշխատանքների գների ճշտություն (ՀԲԳ)	8	0.0	-	18	0.0	-
3.4.9	Հարկ վճարողի գործունեության իրականացման հասցեում սահմանված տեղեկություններ փակցնելը (ՏՓ)	20	1,400.0	-	23	1,900.0	-
3.5	Միասնական հաշվին մուտքագրման գումարների հիմնավորվածության ուսումնասիրություն (Միաս. Ուս.)	2094	62,446.7	218.9%	3921	79,570.5	151.2%
3.6	Չափագրման ուսումնասիրություն (ՉՓՄ)	92	3,197,807.9	221.9%	151	6,675,427.6	363.7%
3.7	Թեմատիկ ուսումնասիրություն (ԹՈԽ)	106	7,944,145.8	219.5%	230	11,897,663.6	169.3%
3.7.1	<i>այդ թվում՝ ճշտված հարկային հաշվարկներով առաջացած գումար</i>	-	183,238.5	64.0%	-	358,284.6	98.3%
3.8	Հանդիպակաց ուսումնասիրություն (Հանդ. Ուս.)	8	0.0	-	10	0.0	-
3.9	ՀՀ ոչ ռեզիդենտների՝ ՀՀ աղբյուրներից ստացած եկամուտներից վճարված հարկի գումարի վերադարձի կամ ՀՀ-ի միջազգային պայմանագրերի դրույթներին համապատասխան օտարերկրյա պետության լիազորված մարմնի հարցումներին պատասխանելու նպատակով իրականացվող ուսումնասիրություն (Ոչ ռեզ. Ուս.)	30	0.0	-	40	0.0	-

4. Հարկային և մաքսային վարչարարության դրվագներ

Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ			Տարվա սկզբից աճողական		
		Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %	Քանակ	Գումար (հազ. դրամ)	Աճի տեմպ %

4.1	Գանձման որոշումներ, ՀՀ ՊԵԿ-ի կողմից և ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, հարկադիր կատարման ներկայացված վարչական ակտեր, սնանկության դիմումներ	X	X	X	X	X	X
4.1.1	Գանձման որոշումներ,	25092	32,770,589.5	94.9%	55997	67,330,902.10	104.8%
4.1.1.1	Հարկադիր կատարման ներկայացված վարչական ակտեր (ստուգման ակտեր, արձանագրություններ և գանձման որոշումներ)	18201	13,195,208.1	176.0%	49529	23,591,247.50	152.3%
4.1.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներ	149	3,313,418.8	61.2%	322	7,489,872.24	108.7%
4.1.2.1	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք բավարարվել են	102	3,544,164.4	130.3%	184	6,574,073.60	123.2%
4.1.2.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված սնանկության դիմումներով վճիռներ, որոնք մերժվել են	9	1,064,523.3	2391.5%	25	1,342,257.34	1651.3%
4.1.3	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված նոր հայցադիմումներ	17	86,963.7	-	22	121,232.00	-
4.1.3.1	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներ, որոնք բավարարվել են	1	0.0	-	1	-	-
4.1.3.2	ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված հայցադիմումներ, որոնք մերժվել են	1	0.0	-	1	-	0.0%
4.1.4	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված նոր հայցադիմումներ	589	4,106,684.8	169.8%	1175	14,233,542.50	231.9%
4.1.4.1	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, որոնք բավարարվել են	467	5,323,395.3	2106.8%	844	8,600,054.70	102.0%
4.1.4.2	ՀՀ ՊԵԿ-ի դեմ ներկայացված հայցադիմումներ, որոնք մերժվել են	174	1,679,699.4	28.8%	329	51,579,337.30	828.3%
4.2	ՀՀ ՊԵԿ կողմից իրականացվող օպերատիվ-հետախուզական միջոցառումների արդյունքում օրենքով նախատեսված պատասխանատվության	X	X	X	X	X	X

	կիրառում և հարկային պարտավորությունների առաջադրում						
4.2.1	Հարուցված վարչական վարույթ	275	252,144.7	0.2%	425	1,151,007.60	1.1%
4.2.2	Պարտավորությունների հաշվարկման և գանձման առաջադրման վերաբերյալ վարչական ակտ	234	252,144.7	0.2%	349	1,151,007.60	1.1%
4.2.3	Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ	17	0.0	-	33	-	-
4.3	ՀՀ Հարկային օրենսգրքի 428-րդ հոդվածի 2-րդ մասով սահմանված վարչական վարույթներ	X	X	X	X	X	X
4.3.1	Հարուցված վարույթներ	63	15,566.5	174.5%	158	26,891.30	56.0%
4.3.2	Կազմված վարչական ակտեր	63	15,566.5	174.5%	158	26,891.30	56.0%
4.3.3	Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշումներ	0	0	-	0	-	-
4.3.4	ՀՀ Հարկային օրենսգրքի 423-րդ հոդվածի համաձայն հաշվարկված փոխհատուցման գումար	57	15,186.7	4421.2%	133	24,301.30	80.6%
4.3.5	ՀՀ Հարկային օրենսգրքի 422-րդ հոդվածի համաձայն հաշվարկված տուգանքի գումար	7	279.8	3.3%	37	2,191.10	20.2%
4.4	Վարչական տույժ նշանակելու մասին որոշումներ (բացառությամբ 4.5 կետում նշված դեպքերի)	15453	326,628.7	96.4%	26505	649,504.00	92.9%
4.5	Վարչական իրավախախտումների վերաբերյալ ՀՀ օրենսգրքի 182 ¹ հոդվածով նախատեսված վարույթներ	X	X	X	X	X	X
4.5.1	Հարուցված վարույթներ	5	750.0	150.0%	12	1,750.00	77.8%
4.5.2	Վարչական տույժ նշանակելու վերաբերյալ որոշումներ	4	750.0	150.0%	8	1,750.00	77.8%
4.5.3	Վարչական վարույթը կարճելու վերաբերյալ որոշում	1	0.0	-	4	-	0.0%
5. Հարկային և մաքսային վարչարարության ներքին դրվագներ							
Հ/Հ	Ցուցանիշ	Հաշվետու եռամսյակ		Տարվա սկզբից աճողական			

		Քանակ	Աճի տեմպ %	Քանակ	Աճի տեմպ %
5.1	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների բողոքարկման հանձնաժողովի կողմից ընդունված որոշումներ, որից՝	688	85.5%	1268	80.9%
5.1.1	բավարարվել է	172	58.1%	332	51.5%
5.1.2	բավարարվել է մասնակի	61	290.5%	97	293.9%
5.1.3	մերժվել է	351	94.9%	672	94.4%
5.1.4	կասեցվել է	-	-	-	-
5.1.5	կարճվել է	104	88.1%	167	93.8%
5.1.6	վերստուգում	-	-	-	-
5.2	ՀՀ ՊԵԿ հարկային և մաքսային մարմինների ծառայողական քննություն անցկացնող հանձնաժողովի կողմից քննարկված ծառայողական քննության ընթացքում ստեղծված նյութեր, որից՝	18	64.3%	25	65.8%
5.2.1	կարգապահական պատասխանատվության ենթարկված ծառայողների թիվ	25	119.0%	28	107.7%
5.3	ՀՀ ՊԵԿ հեռախոսագանգերի կենտրոնի-բաժնի կողմից ստացված հարցադիմումներ, որից՝	52622	107.8%	123576	113.7%
5.3.1	կատարվել է	52414	107.8%	123165	113.8%
5.4	Նոր գրանցված հարկ վճարողների թիվ, որից՝	47343	149.8%	78099	146.0%
5.4.1	ֆիզիկական անձ	44953	153.6%	73141	150.7%
5.4.2	իրավաբանական անձ	2390	103.0%	4958	100.2%
5.5	Լուծարված կամ պետական հաշվառումից հանված հարկ վճարողների թիվ, որից՝	1635	111.4%	3729	118.0%
5.5.1	ԱՁ	1596	110.4%	3654	125.9%

5.5.2	իրավաբանական անձ	39	177.3%	75	29.1%
-------	------------------	----	--------	----	-------

*Աճի տեմպը հաշվարկվում է որպես հաշվետու ժամանակաշրջանի ցուցանիշի հարաբերություն նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշի նկատմամբ (1-4 բաժիններում հաշվարկման հիմք է հանդիսանում գումարային ցուցանիշը): Այն դեպքում, երբ նախորդ տարվա նույն ժամանակաշրջանի միևնույն ցուցանիշը եղել է 0, աճի տեմպ չի հաշվարկվում:

- **Ռուսաստանի Դաշնությունը վավերացրել է Արաբական Միացյալ Էմիրությունների հետ կրկնակի հարկումը բացառելու մասին համաձայնագիրը:**

Համաձայնագրի նպատակն է ապահովել պայմաններ, որոնց դեպքում պետություններից յուրաքանչյուրի իրավաբանական և ֆիզիկական անձինք հարկման ենթակա նույն տեսակի եկամտի մասով կրկնակի հարկման չեն ենթարկվի:

Ռուսաստանի Դաշնության տնտեսության կայուն զարգացումն ապահովելու, արտաքին առևտրատնտեսական և ներդրումային կապերի զարգացման և ընդլայնման նպատակով՝ ներկայում տեղի է ունենում ռուսական բիզնեսի ակտիվ կողմնորոշում դեպի Ասիայի և Մերձավոր Արևելքի երկրների շուկաներ:

Նախատեսված է հարկային տեղեկատվության, այդ թվում՝ բանկային տեղեկատվության փոխանակման ընդլայնված ռեժիմ:

Link: <http://www.finmarket.ru/news/6430752>

- **ԱՄՆ սահմանել է 10% մաքսատուրքեր ամբողջ աշխարհից ներմուծման համար և սահմանել է կոշտ լրացուցիչ վճարներ հիմնական առևտրային գործընկերներից:**

ԱՄՆ նախագահ Թրամփը պահպանել է ամենաձանր հարվածներից մի քանիսը նրանց համար, ում նա անվանել է «երկրներ, որոնք մեզ վատ են վերաբերվում», այդ թվում՝ 34%-ը՝ մրցակից գերտերության՝ Չինաստանի ապրանքների համար, 20%-ը՝ Եվրամիության և 24%-ը՝ Ճապոնիայի համար:

ԱՄՆ նախագահը ապրիլի 2-ին հայտարարել է, որ 10%-ի չափով «բազային» սակագին կսահմանի, այդ թվում՝ մեկ այլ առանցքային դաշնակից՝ Մեծ Բրիտանիան: Ավտոմեքենաների բարձր 25% սակագները, որոնց մասին Թրամփը հայտարարել է անցյալ շաբաթ, ուժի մեջ է մտնելու ապրիլի 3-ից:

Կանադան և Մեքսիկան չեն տուժել նոր սակագներից, քանի որ Թրամփն արդեն մաքսատուրքեր է սահմանել ԱՄՆ երկու հարևանների համար այն բանի համար, որ, նրա խոսքով, նրանք չեն կարողացել կանխել ֆենտանիլ թմրանյութի ապօրինի շրջանառությունը:

Շատ փորձագետներ նախազգուշացնում են, որ սակագները կարող են ներքին անկում առաջացնել, քանի որ ծախսերը ընկնում են ԱՄՆ սպառողների ուսերին և կործանարար առևտրային պատերազմ արտերկրում: ԱՄՆ-ի ֆինանսների նախարար Սքոթ Բեսենթն երկրներին նախազգուշացրել է հակաքայլեր չձեռնարկել՝ հայտարարելով, որ եթե պատասխան միջոցներ ձեռնարկվեն, էսկալացիա տեղի կունենա:

Սակագները նաև կուժեղացնեն այն մտավախությունները, որ Թրամփն էլ ավելի է հեռացնում ԱՄՆ դաշնակիցներին նոր կարգից, որը հիմնված է ամերիկյան գերազանցության տեսլականի վրա: Ավստրալիայի վարչապետ Էնթոնի Ալբանեզեն հայտարարել է, որ սակագները «բացարձակապես անհիմն են» և կփոխեն Միացյալ Նահանգների հետ հարաբերությունների ընկալումը: Իտալիայի վարչապետ Ջորջիա Մելոնին, որը Թրամփի մերձավոր դաշնակիցն է, հայտարարել է, որ ԵՄ-ի նկատմամբ մաքսատուրքերի սահմանումը «սխալ է», սակայն խոստացել է աշխատել Վաշինգտոնի հետ գործարքի կնքման ուղղությամբ:

Ներմուծումների 10% մաքսատուրքը սահմանել է նաև Հայաստանի Հանրապետության համար:

Link: <https://www.abs-cbn.com/news/business/2025/4/2/trump-unveils-sweeping-global-tariffs-0606>

- ԱՄՆ-ն և Չինաստանը առևտրային սակագների նվազեցման շուրջ համաձայնության են եկել:

ԱՄՆ ֆինանսների նախարարը մայիսի 12-ին հայտարարել է, որ Միացյալ Նահանգները և Չինաստանը համաձայնության են եկել փոխադարձ սակագների ժամանակավոր իջեցման շուրջ: Այս գործարքը դիտվում է որպես աշխարհի երկու խոշորագույն տնտեսությունների միջև առևտրային պատերազմը թուլացնելու քայլ, որը խաթարեց միջազգային առևտուրը:

Ժնևում չինացի պաշտոնյաների հետ բանակցություններից հետո ԱՄՆ ֆինանսների նախարար Բեսենթը հայտնել է, որ երկու երկրները համաձայնել են սակագների 90-օրյա դադարին՝ ավելի քան 100 %-ային կետով իջեցմամբ, ինչի արդյունքում սակագները նվազել են մինչև 10%: Բեսենթն ընդգծել է, որ երկու կողմերն էլ լավ են ներկայացրել իրենց ազգային շահերը և ընդգծել հավասարակշռված առևտրի կարևորությունը՝ հայտարարելով, որ ԱՄՆ-ն կշարունակի շարժվել այդ ուղղությամբ:

Այս համաձայնագիրը նշանավորում է ԱՄՆ-ի և Չինաստանի բարձրաստիճան տնտեսական պաշտոնյաների առաջին անձնական հանդիպումը նախագահ Դոնալդ Թրամփի՝ իր պաշտոնին վերադառնալուց հետո, որի ընթացքում խիստ մաքսատուրքներ են սահմանվել, հատկապես չինական ապրանքների համար: Ի պատասխան՝ Չինաստանը պատասխան մաքսատուրքեր և արտահանման սահմանափակումներ է մտցրել հիմնական նյութերի վրա:

Առևտրային հակամարտությունը խաթարել է երկկողմ առևտրաշրջանառությունը գրեթե 600 մլրդ դոլարով և ազդել է մատակարարման շղթաների վրա:

Link: <https://www.reuters.com/world/china/us-china-reach-deal-slash-tariffs-officials-say-2025-05-12/>

- Իրանի և Թուրքիայի մաքսային մարմինները համագործակցության համաձայնագիր են ստորագրել:

Իրանի և Թուրքիայի մաքսային ծառայությունների ղեկավարները երկկողմ համագործակցության համաձայնագիր են ստորագրել հանդիպման ժամանակ, որի ընթացքում երկու կողմերն էլ առևտրային կապերը զարգացնելու վճռականություն են հայտնել:

ԻԻՀ մաքսային վարչության տվյալներով՝ Իրանի ֆինանսների և էկոնոմիկայի փոխնախարար և մաքսային վարչության ղեկավար Ֆորուդ Ասգարին հանդիպել է Թուրքիայի մաքսային և առևտրի փոխնախարարի հետ:

Երկու պաշտոնյաներն էլ ընդգծել են, որ առևտրային և մաքսային համագործակցության ներկայիս մակարդակը չի արտացոլում երկրների տեխնիկական հնարավորությունները և քաղաքական կամքը: Ասգարին հայտարարել է, որ Իրանը ձգտում է ոչ միայն վերականգնել Թուրքիայի հետ առևտրի նախկին ցուցանիշները, այլև գերազանցել դրանք՝ հաշվի առնելով առկա պայմաններն ու առկա ռեսուրսները:

Իրանի Իսլամական Հանրապետության մաքսային վարչության տվյալների համաձայն՝ իրանական առաջին օրացուցային ամսվա ընթացքում (մարտի 21 - ապրիլի 21) Իրանը Թուրքիա է արտահանել 189 մլն դոլարի ոչ նավթային ապրանքներ: Տվյալները ցույց են տվել, որ Թուրքիան նշված ամսում դարձել է Իրանի ոչ նավթային արտահանման չորրորդ խոշոր ուղղությունը: Ըստ զեկույցի՝ Թուրքիան, որն Իրան է արտահանել 538 մլն դոլարի ապրանք, նշված ամսում դարձել է Իրանի ոչ նավթային ներմուծման երրորդ աղբյուրը:

Link: <https://www.tehrantimes.com/news/513632/Iran-Turkey-customs-authorities-sign-cooperation-agreement>

- ԵԱՏՄ-Իրան. ուժի մեջ է մտել ազատ առևտրի մասին լիաֆորմատ համաձայնագիրը:

2025 թվականի մայիսի 15-ին ուժի մեջ է մտել Եվրասիական տնտեսական միության և նրա անդամ պետությունների՝ մի կողմից, և Իրանի Իսլամական Հանրապետության՝ մյուս կողմից, միջև ազատ առևտրի մասին լիաֆորմատ համաձայնագիրը:

Այն կփոխարինի 2019 թվականից գործող ժամանակավոր համաձայնագրին՝ սահմանափակ ապրանքային ընդգրկմամբ և ԵԱՏՄ երկրների արտադրողների համար կստեղծի իրանական շուկա մուտք գործելու եզակի պայմաններ: Այսպես, միությունից Իրան առաքվող ապրանքների նկատմամբ ներմուծման մաքսատուրքի միջին դրույքաչափը 20%-ից կնվազի մինչև 4,5%:

Լիաֆորմատ համաձայնագրի իրականացման շրջանակում կողմերն արդեն ձեռնամուխ են եղել համատեղ կոմիտեի առաջին նիստի կազմակերպմանը, որը նախատեսված է 2025 թվականի երկրորդ կեսին, որի ընթացքում նախատեսվում է քննարկել ԵԱՏՄ-ԻԻՀ միջև առևտրատնտեսական համագործակցության հետագա զարգացման կոնկրետ հարցեր, նշել է Եվրասիական տնտեսական հանձնաժողովի առևտրի հարցերով նախարար Անդրեյ Սլեպնյովը: Նոր համաձայնագիրն ամրագրում է ԵԱՏՄ-ի և Իրանի միջև արտոնյալ հասանելիության փոխադարձ պարտավորությունները ամբողջ ապրանքային անվանացանկի 90%-ի նկատմամբ: Լիարժեք ձևաչափով ժամանակավոր համաձայնագրի համեմատ զգալիորեն բարելավվել է կարգավորող մասը, որն ուղղված է կողմերի միջև առանց խոչընդոտների առևտրի տարածքի ստեղծմանը: Փորձագետների գնահատականներով՝ դրա իրականացումը թույլ կտա բազմապատիկ ավելացնել ԵԱՏՄ-ի և Իրանի միջև ապրանքաշրջանառությունը, որը միջնաժամկետ հեռանկարում կարող է հասնել 12 մլրդ դոլարի:

Link: <https://eec.eaeunion.org/news/eaes-iran-vstupilo-v-silu-polnoformatnoe-soglashenie-o-svobodnoy-torgovle/>

- ԵԱՏՄ-ում շարունակվում է գործել մաքսային տարանցման ապահովման հավաստագրերի ձևակերպման նախկին կարգը:

Այդ կարգը նախատեսված է «մաքսային տարանցում» մաքսային ընթացակարգին համապատասխան փոխադրվող ապրանքների համար մաքսատուրքերի, հարկերի վճարման ապահովման տրամադրման որոշ հարցերի, մաքսատուրքերի, հարկերի գանձման առանձնահատկությունների և այդպիսի ապրանքների համար գանձված գումարների փոխանցման կարգի մասին 2010 թվականի մայիսի 21-ի համաձայնագրով:

Համաձայնագիրը կիրառվելու է մինչև ԵԱՏՄ շրջանակում ընդհանուր գործընթացի իրականացումը, որը կապահովի միության անդամ պետությունների մաքսային մարմինների միջև ապահովման հավաստագրերի և դրանցից ստացված տեղեկությունների փոխանակումը:

Եվրասիական տնտեսական հանձնաժողովի 2023 թվականի հոկտեմբերի 24-ի թիվ 151 որոշումը (ուժի մեջ է 2025 թվականի ապրիլի 1-ից), կսկսի կիրառվել անհրաժեշտ ընդհանուր գործընթացի իրականացումից հետո:

Link: <https://t.me/EECommission/1918>

- Համաշխարհային մաքսային կազմակերպության զեկույցը՝ խելացի անվտանգության սարքերի (Smart Security Devices – SSD) մաքսային և լոգիստիկ գործողությունների վրա ազդեցության վերաբերյալ:

Համաշխարհային մաքսային կազմակերպությունը հունիս ամսին հրապարակել է կարևոր զեկույց, որը վերլուծում է խելացի անվտանգության սարքերի ազդեցությունը մաքսային և լոգիստիկ գործողությունների վրա ամբողջ աշխարհում:

Համաշխարհային մաքսային կազմակերպությունը կարևորում է խելացի անվտանգության սարքերի առավելություններն ու մարտահրավերները համաշխարհային առևտրում:

Խելացի անվտանգության սարքերը, ներառյալ խելացի կողպեքները, հետևող սենսորները և խելացի բեռնարկղերը, նորարարական ներուժ ունեն բեռների անվտանգության բարձրացման, մաքսային ընթացակարգերի պարզեցման և մատակարարման շղթայի թափանցիկության համար:

Կարևորված հիմնական առավելությունները ներառում են իրական ժամանակում բեռների հետևում, ռիսկերի բարելավված կառավարում և չարտոնված մուտքի ավելի արդյունավետ հայտնաբերում, որոնք միասին նպաստում են ավելի անվտանգ և արդյունավետ միջսահմանային առևտրին: Այնուամենայնիվ, զեկույցում նշվում են նաև այնպիսի հիմնական խնդիրներ, ինչպիսիք են ակտիվ սարքերում մարտկոցների սահմանափակ քանակը, մասնատված կանոնակարգերը և համատեղելիության գլոբալ ստանդարտների բացակայությունը, որոնք խոչընդոտում են լայն ընդունմանը:

ՀՄԿ-ն ընդգծում է, որ միջազգային համագործակցությունը կարևոր նշանակություն ունի տվյալների փոխանցման, գաղտնագրման և սարքերի համատեղելիության միասնական ստանդարտների մշակման համար: ՀՄԿ-ն նաև կոչ է անում համատեղ ջանքեր գործադրել մաքսային ծառայությունների աշխատակիցների վերապատրաստման և ենթակառուցվածքների արդիականացման ուղղությամբ՝ անվտանգության խելացի սարքերից առավելագույն օգուտ քաղելու համար:

ՀՄԿ-ն կոչ է անում շարունակել համագործակցել շահագրգիռ կողմերի հետ տեխնիկական և կարգավորող խոչընդոտները հաղթահարելու համար, ինչը գլոբալ առևտուրն ավելի խելամիտ, անվտանգ և արդյունավետ կդարձնի:

Link: <https://www.wcoomd.org/en/media/newsroom/2025/june/wco-report-on-smart-security-devices.aspx>